



Նախագիծ

Հայաստանում իրական շահառուների բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն

(Վերջնական տարբերակ)

Բովանդակություն

1. Համառոտ նկարագիր	2
Հիմնական ժամկետներ	9
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	10
3. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) պահանջները իրական շահառուների վերաբերյալ և մինչ այժմ ունեցած փորձը..	11
ԱՃԹՆ 2016 ստանդարտ	11
Իրական շահառուի սահմանման փորձնական ծրագիր.....	11
4. Իրական շահառուների և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային սահմանումներն ու լավագույն փորձը	16
Իրական շահառուների բացահայտման համառոտ պատմությունը	16
Միջազգային սահմանումներ	18
ԱՃԹՆ-ի շրջանակներում ՖԱԹՖ-ի նորմերի սահմանափակումները	19
Լավագույն միջազգային փորձը.....	20
Կապված անձանց բաժնային մասնակցություն.....	23
5. Հայաստանում իրական շահառուների և ՔԱՈՒԱ առաջարկվող սահմանումները	25
Համապատասխան պետական գործակալություններ, օրենքներ և կարգավորումներ	28
7. Առաջարկվող մոտեցում	32
Տվյալների հավաքագրում և ստուգում	36
8. Ինստիտուցիոնալ առաջարկություններ.....	39
Հավելված Ա. Իրական շահառուների սահմանումներն ըստ ԱՃԹՆ փորձնական ծրագրի	40

1. Համառոտ նկարագիր

Հանքարդյունաբերության ոլորտում իրական շահառուների բացահայտման վերաբերյալ առանձին պետական քաղաքականություն սահմանված չէ, սակայն Ընդերքի մասին գործող օրենսգրքով սահմանված է պահանջ, համաձայն որի արտադրության լիցենզիայի համար դիմող ընկերությունները պարտավոր են ընկերությունում առնվազն 10% բաժնեմասնակցություն ունեցող բոլոր մարմինների մասին մանրամասն տեղեկություններ ներկայացնել: Այնուամենայնիվ, նշված պահանջը վերաբերում է միայն ուղղակի բաժնետերերին, այսինքն համաձայն արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) պահանջների մայր ընկերության սեփականատերերի կամ հիմնական բաժնետիրոջ բացահայտում չի պահանջվում: Ընդերքի մասին օրենսգիրքը չի պարունակում նաև ընկերության սեփականատերերի կտրուկ փոփոխության վերաբերյալ հաշվետվության մեխանիզմ, իսկ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքո գործող ընդերքի գործակալությունը չի վարում հանքարդյունաբերական ոլորտի ընկերությունների իրական շահառուների որևէ ռեեստր: Հանքարդյունահանող ընկերության գրանցման փուլում ընկերությունում 10%-ից ավել բաժնեմաս

ունեցող անձանց բացահայտման պահանջը մանրամասն տեղեկությունների հրապարակման պահանջ չէ, նշված տեղեկատվությունը հանրամատչելի չէ, և հանքաարդյունաբերական ընկերության ուղղակի բաժնետերերի մասին տեղեկատվությունից բացի՝ հետագայում այլ մանրամասն տեղեկությունների հրապարակում չի պահանջում:

ՀՀ օրենսդրությունն, այնուամենայնիվ, ՖԱԹՖ-ի չափանիշների համաձայն իրական շահառուների և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մի քանի սահմանում է առաջարկում: Նման կարգավորումներ պարունակող հիմնական օրենսդրական ակտերը մեծամասամբ վերաբերում են ֆինանսական, արժեթղթերի շուկայի, գնումների և ոլորտներին:

Նշանակալից մասնակցության բացահայտման պահանջն առկա է: Օրինակ՝ նշված բացահայտումը պարտադիր է բանկերի համար և վերաբերում է 10%-ից ավել ուղղակի կամ անուղղակի բաժնեմասնակցությանը: Ավելին, ՀՀ ԿԲ-ն այն մարմինն է, որը կարգավորում է բանկում նշանակալից մասնակցի փոփոխության իրականացումը: Հայաստանի որևէ բանկում ուղղակի կամ անուղղակի բաժնեմասնակցության ցանկացած փոփոխություն իրավական ուժ չունի՝ առանց ՀՀ ԿԲ նախնական համաձայնության:

Իրական շահառուների մասին համապարփակ տեղեկատվությունը հիմնականում հասանելի է բանկերին (բանկում հաշիվ բացող ցանկացած անձի վերաբերյալ)՝ գործող օրենսդրության պահանջների համաձայն և ՀՀ ԿԲ-ին (իր հսկողության և վերահսկողության տակ գտնվող ֆինանսական հաստատությունների վերաբերյալ): Այսպիսով, Հայաստանում նշանակալից մասնակցության բացահայտման փորձ առկա է, և նման ռեեստրեր իսկապես վարվում են, սակայն տեղեկատվությունը հանրամատչելի չէ: Նշված փորձը կարող է դիտարկվել և կիրառվել հանքաարդյունաբերության ոլորտում իրական շահառուների բացահայտման գծով օրենսդրական փոփոխություններ մշակման համար:

Ինչպես արդեն նշել ենք՝ Հայաստանում իրական շահառուների բացահայտման գծով հիմնական և միասնական քաղաքականություն կամ օրենսդրություն մշակված չէ: Համապատասխան դրույթներն ամրագրված են հետևյալ օրենքներում և իրավական ակտերում.

- 2001 թ-ից գործող «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում 2016թ-ին հաստատված փոփոխություններով ներկայացվել է 20,000,000 ՀՀ դրամը գերազանցող կապիտալով իրավաբանական անձանց գրանցման փուլում իրական շահառուի բացահայտման պահանջ: Նշված պահանջը հիմնված է ՓԼ/ԱՖ-ի պահանջների վրա և ըստ էության բացառապես պաշտոնական բնույթ է կրում, քանի որ գրանցման ժամանակ ներկայացված տեղեկատվության հետագա ստուգում չի իրականացվում: Տեղեկատվությունը հանրամատչելի չէ և պահվում է պետական գրանցումն իրականացնող

մարմնի մոտ:

- Ֆինանսական հատվածը կարգավորող օրենսդրությունը («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք) համարվում է լավագույններից մեկը Հայաստանում: Այն արդյունավետ կերպով իրականացվում է համապատասխան կարգավորող մարմնի և լիցենզավորված մարմինների (բանկեր, ներդրումային ընկերություններ, դեպոզիտարիաներ և այլն) կողմից:
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2008թ-ից և հիմնված է ՖԱԹՖ-ի սկզբունքների և պահանջների վրա, ներառում է իրական շահառու հանդիսացող ֆիզիկական անձի ամենամաքողական սահմանումը, ուղղակի և անուղղակի մասնակցության և հսկողության հասկացությունը, որոշումների կայացման կամ ընկերությանը վերաբերող հարցերի կարգավորման համար պատասխանատու բարձր օղակի ղեկավարների նշանակման միջոցով հսկողության իրականացումը, ինչպես նաև գործարքի հիման վրա շահերի բացահայտումը:
- Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքը, որն ուժի մեջ է 2012թ-ից, իրական շահառուների բացահայտման պահանջների վերաբերյալ էական տեղեկություններ չի պարունակում: Միակ պահանջը վերաբերում է հանքաարդյունահանման/հետազոտության լիցենզիայի համար դիմող ընկերության ուղղակի բաժնետիրոջ բացահայտմանը: Նշված տեղեկատվությունը հանրամատչելի չէ:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2017թ-ից, մանրամասն սահմանում է պետական կարիքների նպատակով իրականացնող գնումների մրցույթի հայտատուի կողմից իր 10%-ից ավել բաժնեմաս ունեցող անձանց, հայտատուի գործադիր ղեկավարների նշանակման իրավասություն ունեցող անձանց, ինչպես նաև հայտատուի 15%-ից ավել շահույթ/եկամուտն ստանալու իրավունք ունեցող անձանց մասին տեղեկությունների հրապարակման դրույթը:
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը գործում է 2012թ-ից, ընդգրկում է հանրային ծառայության սահմանումը և նշված ծառայության շրջանակներում սամանված պաշտոնների դասակարգումը: Համաձայն նշված օրենքի՝ հանրային ծառայողները պարտավոր են առևտրային կազմակերպություններում բաժնեմաս ունենալու դեպքում հայտնել այդ մասին հանրային ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ինչպես նաև իր պաշտոնավարման ողջ ընթացքում հանձնել առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասնակցությունը հավատարմագրային կառավարման:
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2013թ-ից, սահմանում է տեղեկատվության հասանելիության գաղափարը և

հարցվող տեղեկատվության տրամադրման պահանջ պետական ընկերությունների, բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների, հանրային նշանակություն ունեցող կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց համար:

- Նոր հարկային օրենսգիրքը, որն ուժի մեջ կլինի 2018թ-ից և որը դեռևս պետք է կիրառվի և ստուգվի գործնականում, տրանսֆերային գնագոյացման մասին նոր դրույթներ է պարունակում, որոնք մինչև նոր օրենսգրքի ընդունումը Հայաստանում որևէ կերպ սահմանված չէին: Նոր օրենսգիրքը ներառում է տրանսֆերային գնագոյացման պահանջների համաձայն ընկերության փոխկապակցվածության սահմանումը, ինչպես նաև 20% բաժնեմասնակցության սահմանաչափ և այլ պահանջներ է սահմանում:

Որպես հանքարդյունաբերության ոլորտում իրական շահառուների բացահայտման հիմնական մեխանիզմ՝ պետք է դիտարկել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի փոփոխությունը՝ համադրելով իրական շահառուի բացահայտման գործող պահանջները և իրական շահառուի բացահայտման ՖԱԹՖ-ի չափանիշը: Նոր լիցենզիայի հայտատուները պարտավոր կլինեն բացահայտել իրենց իրական շահառուներին՝ որպես լիցենզիայի տրամադրման նախապայման, իսկ գործող լիցենզիա ունեցող անձանց համար որոշակի ժամկետ կսահմանվի նշված տեղեկատվությունը տրամադրելու համար (սահմանված պահանջը չկատարելու դեպքում պատժամիջոցների կիրառման պայմանով)

Ինչ վերաբերում է իրական շահառուի սահմանմանը, որը պետք է ընդգրկվի Ընդերքի մասին օրենսգրքում, հաշվի առնելով միջազգային փորձը, մենք առաջարկում ենք ստորև ներկայացված սահմանումը, որի համար հիմք է ծառայել 2017թ-ի հոկտեմբերին Դրոգաստանի Հանրապետության ընդերքի օգտագործման մասին օրենքում կատարված փոփոխության օրինակը, և որը հաստատվել է ԱՃԹՆ միջազգային քարտուղարության կողմից և հիմնված է ՀՀ օրենսդրությունում իրական շահառու հասկացության մինչ օրս առկա սահմանումների վրա:

«Իրական շահառու է հանդիսանում այն ֆիզիկական անձը, ով ուղղակի կամ անուղղակի կերպով ամբողջությամբ տիրապետում կամ վերահսկում է իրավաբանական անձին»:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական շահառու՝ անկախ հսկողության մակարդակից և մասնակցության կամ բաժնետիրացման չափից:

Տիրապետում կամ հսկողություն նշանակում է, որ ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով.

- ա) առանձին կամ ընտանիքի անդամների և/կամ փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի առնվազն 20% մասնակցության կամ քվերակության իրավունքին
- բ) վերահսկում է իրավաբանական անձին նախապատվության իրավունք տվող բաժնետոմսերի, արտոնյալ բաժնետոմսերի և/կամ երկակի կամ բազմակի քվերակության իրավունք տվող բաժնետոմսերի միջոցով

- զ) էական տնտեսական օգուտ է ստանում իրաբանական անձից, որը կազմում է իրավաբանական անձի տարեկան շահույթի առնվազն 15 տոկոսը
- դ) իրավասու է նշանակել կամ ազատել իրավաբանական անձի տնօրենների մեծամասնությանը
- ե) իրավունք ունի ազդել կառավարման վրա կամ վերահսկել կառավարումը կամ ընկերության գործունեությունը կամ իրավասու է կանխորոշել որոշումներն այլ միջոցներով՝ ներառյալ և առանց սահմանափակման գործարքների, հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի միջոցով:

Սույն օրենսգրքի իմաստով «քաղաքական ազդեցություն ունեցող անձինք» են համարվում այն ֆիզիկական անձինք, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամները և փոխկապակցված անձինք:

Սույն օրենսգրքի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:

Սույն օրենսգրքի իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե

- ա) տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.
- բ) նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների թվի մեկ երրորդը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.
- գ) նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Սույն օրենսգրքի իմաստով ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են կապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում.

- ա) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տնօրինող մասնակից.
- բ) օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.
- գ) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, վարչության անդամ, գլխավոր հաշվապահ, նրա տեղակալ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար, անդամ կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի

անդամ կամ նման այլ մարմինների անդամ:

Ինչ վերաբերում է քաղաքական ազդեցություն ունեցող անձի (ՔԱՈՒԱ) սահմանմանը, այս դեպքում նա, հաշվի առնելով միջազգային փորձը, կարող ենք դիտարկել հետևյալը.

«(ՔԱՈՒԱ) այն անհատն է, որին վստահված է կամ վստահված է եղել հասարակական/հանրային կարևոր գործառույթ: Նշված սահմանումը կարող է ներառել նաև ընտանիքի անդամներին և մտերմներին: Հանրային կարևոր գործառույթներ ունեն պետության կամ կառավարության ղեկավարները, բարձրաստիճան քաղաքական գործիչները, նախարարները և նախարարի տեղակալները, դատական կամ ռազմական պաշտոնյաները, պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների վերին օղակի ղեկավարները կամ քաղաքական կուսակցությունների ակնառու գործիչները, դեռևս ազդեցիկ դեր ունեցող նախկին պաշտոնյաները: Արյունակցական, ամուսնական կամ այլ քաղաքացիական կապ ունեցող ընտանիքի անդամները կարող են ընտանիքի անմիջական անդամ չհամարվել:

Փոխկապակցվածություն կարող է լինել թե՛ անձնական և թե՛ գործնական»:

Այսպիսով, եթե հայտարարվում է, որ պետական պաշտոնյայի ընտանիքի անդամը հանդես է գալիս որպես հանքաարդյունաբերական ընկերության բաժնեմասի սեփականատեր, վերջինս համարվում է քաղաքական ազդեցություն ունեցող անձ Նշված սահմանումը Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում կամ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացնում:

Տվյալների հավաքագրումը և ստուգումը կարելի է ապահովել երկու հիմնական եղանակով.

- Տարբերակ 1. բազմաոլորտային մոտեցում, որը համահունչ է իրական շահառուների բացահայտման գործընթացները արդիականացնելու միջոցով MONEYVAL-ի 5-րդ գնահատման առաջարկություններին համապատասխանելու Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ծրագրերին
- Տարբերակ 2. ոլորտային մոտեցում, որի ներքո տվյալների ստուգման պատասխանատվությունը կրելու է ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքո գործող ընդերքի գործակալությունը:

Բազմաոլորտային մոտեցման առավելությունը կայանում է նրանում, որ այն ընդգրկում է բոլոր ոլորտները՝ առանց որևէ կոնկրետ ոլորտ շեշտադրելու (և հետևաբար խորհրդարանում լոբբիստական դիմադրության հանդիպելու): Նշված մոտեցումը նաև հիմնվում է իրական շահառուների հետ կապված հարցերի կարգավորման ՀՀ ԿԲ գործող իրավասությունների և փորձի վրա: Սակայն այս մոտեցման ամենամեծ թերությունը ժամկետն է. կիսաջողվի՞ արդյոք մշակել այն մինչև 2020թ-ի հունվարի 1-ը: Նշված մոտեցման մյուս թերությունն այն է, որ իրական շահառուների բացահայտման ներկայիս մեխանիզմները հիմնված չեն հանրամատչելի տվյալների սկզբունքի վրա, իսկ ստուգման գործընթացներն

իրականացվում են կասկածելի գործարքների դեպքում, այլ ոչ թե գործընթացի սկզբում:

Ոլորտային մոտեցումն, ընդհակառակը, ավելի վերահսկելի է ԱՃԹՆ վերջնաժամկետի առումով (փոխարինման ենթակա մասերն ավելի քիչ են) և կարող է մշակվել՝ որպես վերջնական արդյունք՝ ապահովելով իրական շահառուների հանրամատչելի ռեեստր: Նշված մոտեցման թերությունն այն է, որ հանքաարդյունաբերական ոլորտը կարող է դեմ հանդես գալ ոլորտային մոտեցմանը և հայտարարել այն խտրական: Նշված մոտեցմանը կարող են դեմ հանդես գալ նաև կառավարությունում՝ հաշվի առնելով ՀՀ ԿԲ և վերջինիս Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ներկայիս գործունեությունը:

Ոլորտային մոտեցման դեպքում անհրաժեշտ կլինի տվյալները փոխանցել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը (համաձայն ընդերքի օգտագործման օրենսգրքի փոփոխության) և ՀՀ պետքազուտր ու Կենտրոնական դեպոզիտարիա: Էթիկայի հանձնաժողովը պետք է նաև իրավունք ունենա իր իրավասությունների շրջանակում տեղեկատվություն ստանալ: Անհրաժեշտ կլինի նաև սահմանել տարբեր գործակալությունների և հաստատությունների միջև տեղեկությունների փոխանակման կանոններ՝ փոխըմբռնման հուշագրերի մշակման և համաձայնեցման միջոցով:

Լիցենզավորման յուրաքանչյուր հայտի ստուգման իրավասությունը պետք է վերապահվի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը, իսկ այլ հաստատությունները նշված ստուգման իրականացման համար պարտավոր կլինեն համագործակցել նախարարության հետ:

Որպես այլընտրանքային ենթատարբերակ՝ կարելի է նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը վերապահված նշված իրավասությունը տալ որևէ մասնագիտացված գործակալության (օրինակ՝ ֆինանսական դիտարկումների կենտրոնին), հաշվի առնելով վերջիններիս փորձը, սակայն մեր կարծիքով նշված իրավասությունն կարելի է մշակել և վերապահել էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը կամ նախարարության՝ հանքաարդյունաբերական ոլորտի գործունեությունը կարգավորող համապատասխան հաստատությանը: Սա թերևս ստեղծման փուլում կարող է ծախսատար լինել, սակայն թույլ կտա կարգավորման և կիրառման պատշաճ մշակույթ ստեղծել (ինչպես ներկայիս, օրինակ՝ ՀՀ ԿԲ և այլ կանոնակարգերը):

Հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների/մշակումների ներկայիս փուլը և ինստիտուցիոնալ շրջանակները Հայաստանում, ինչպես նաև ընկերությունների (իրավաբանական անձանց) միասնական ռեգիստրի մոտալուտ ներդրումը, բոլոր տվյալների՝ ներառյալ և առանց սահմանափակման իրավաբանական անձանց տվյալների, լիցենզիաների, արտոնագրերի և այլ համանման փաստաթղթերի համար նախատեսված տվյալների շտեմարանների փոխանցումը Պետքազուտրին, մենք առաջարկում ենք հանքաարդյունահանող ընկերությունների իրական

շահառուների բացահայտման հարցում որդեգրել բազմաուղորտային մոտեցման քաղաքականությունը՝ «Ընդերքի օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ մշակելու, ընդունելու և կիրարկելու և Պետոեգիստրին ու ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը ստուգման և օրենքի համապատասխանության պահանջի ապահովման որոշակի իրավունքներ վերապահելու միջոցով: Նշված մոտեցումը թույլ կտա մինչև 2020թ-ի հունվարի 1-ը (ԱՃԹՆ վերջնաժամկետը) ունենալ հանքաարդյունաբերական ընկերությունների իրական շահառուների հանրային ռեգիստր:

Հիմնական ժամկետներ

Մենք խորհուրդ ենք տալիս ընտրել վերոնշյալ երկրորդ տարբերակը և իրականացնել այն հետևյալ ժամանակացույցով.

1. Մինչև 2017թ-ի ավարտը մշակել իրական շահառուի սահմանումը՝ այն Ընդերքի մասին օրենսգրքում ներառելու նպատակով, ինչպես նաև Ընդերքի մասին օրենսգրքի համապատասխան փոփոխությունները՝ հաշվի առնելով շահառուների հետ իրավական հաշվետվության քննարկման արդյունքները:
2. 2018թ-ի ընթացքում մշակել Ընդերքի մասին օրենսգրքի փոփոխությունները՝ խորհրդակցելով շահառուների հետ՝ մինչև 2018թ-ի ավարտը դրանք ընդունելու նպատակով:
3. 2019թ-ի հունիսից ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը պետք է սկսի երկրորդային օրենսդրության մշակման և հանքաարդյունաբերական ընկերությունների համար պետոեգիստրի ստեղծման աշխատանքները՝ համակարգը մինչև կիրառումը փորձարկելու նպատակով բավարար ժամանակ ունենալու համար:
4. 2019թ-ից կազմակերպել և իրականացնել մի շարք սեմինարներ, ուսումնական ծրագրեր և հանդիպումներ՝ նոր օրենսդրական պահանջներին ծանոթացնելու նպատակով:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ) մեկնարկել է 2003թ-ին: Այն հիմնված է 12 սկզբունքների վրա, որոնց նպատակն է բարձրացնել արդյունահանման ոլորտում եկամուտների թափանցիկությունը: Նշված նախաձեռնությունը լայն արձագանք ստացավ ողջ աշխարհում: ԱՃԹՆ-ին այժմ անդամակցում է 53 երկիր: Նշված նախաձեռնության իրականացմանը զուգահեռ մշակվել են նաև օրենսդրական համապատասխանության պահանջները: Նորմատիվ շրջանակների վերջին փոփոխությունների և ԱՃԹՆ 2016 ստանդարտի համաձայն՝ մինչև 2020թ-ի հունվարի 1-ը բոլոր անդամ երկրները պետք է ապահովեն հաշվետու ընկերությունների կողմից իրենց իրական շահառուների (այդ թվում քաղաքական ազդեցություն ունեցող անձանց) բացահայտման պահանջի կատարումը: Մինչև սահմանված վերջնաժամկետը անդամ երկրները պարտավոր են հրապարակել իրական շահառուների բացահայտման վերաբերյալ ճանապարհային քարտեզ (մինչև 2017թ-ի հունվարի 1-ը):

Այս նախագիծը Հայաստանում ԱՃԹՆ շրջանակներում մինչև 2020թ. իրական շահառուների բացահայտմանն նախաձեռնությանն աջակցելու համար երեք հիմնական նպատակ է սահմանում.

1. Իրավական ուսումնասիրություն իրականացնել և իրավական բարեփոխումներ առաջարկել Հայաստանում իրական շահառուների բացահայտման գործընթացը հեշտացնելու նպատակով
2. Իրական շահառուների բացահայտման թեմայով շահառուներին խորհրդատվության տրամադրել
3. Մշակել ճանապարհային քարտեզ՝ մինչև 2020թ-ը ԱՃԹՆ-ով սահմանված իրական շահառուների բացահայտման պահանջները Հայաստանում ներդնելու համար:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված է Հայաստանում իրական շահառուների բացահայտման վերաբերյալ ներկայիս կարգավորումների իրավական վերլուծությունը: Այն ներառում է իրական շահառուի սահմանումը և այն իրավական փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են Հայաստանում մինչև 2020թ-ի հունվարի 1-ը ԱՃԹՆ ներդնելու համար:

3. Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) պահանջները իրական շահառուների վերաբերյալ և մինչ այժմ ունեցած փորձը

ԱՃԹՆ 2016 ստանդարտ

ԱՃԹՆ ստանդարտը հրապարակվել է 2016թ-ի փետրվարին: Նշված ստանդարտով սահմանված ընդհանուր 8 պահանջից երկրորդը վերաբերում է իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներին: 2.5 կետը վերաբերում է մասնավորապես իրական շահառուների բացահայտման պահանջին: Նշված դրույթը բաղկացած է 8 ենթաբաժիններից (ա-ից է), որոնք համառոտ ներկայացված են ստորև:

- ա) ԱՃԹՆ-ն իրականացնող պետություններին խորհուրդ է տրվում վարել հանրությանը հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած անձի/անձանց իրական սեփականատերերի ռեգիստր:
- Պահանջվում է, որ ԱՃԹՆ-ի զեկույցում արձանագրվեն իրական սեփականության բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը և բազմաշահառու խմբի քննարկումները (այդ թվում իրական շահառուների բացահայտման ճանապարհային քարտեզը):
- Իրական շահառուների մասին հանրամատչելի ռեգիստրը պետք է ներդրվի մինչև 2020թ-ի հունվարի 1-ը:
- Բացահայտվող տեղեկություններում պետք է ներառվեն իրական շահառուի անունը, քաղաքացիությունը և բնակության երկիրը, ինչպես նաև նշվեն քաղաքական ազդեցություն ունեցող անձանց անունները:
- Բազմաշահառու խումբը մասնակից ընկերությունների նկատմամբ պետք է ձևավորի այնպիսի մոտեցում, որը հնարավորություն կտա ապահովել նրանց կողմից տրամադրվող տեղեկությունների ճշգրտությունը:
- Բազմաշահառու խումբը պետք է համաձայնության գա «իրական շահառու» եզրույթի սահմանման շուրջ հաշվի առնելով միջազգային նորմերն ու ազգային օրենսդրության պահանջները (բորսայում գրանցված ընկերությունները պետք է ներկայացնեն համապատասխան բորսաներում առկա փաստաթղթերի հղումները):
- ԱՃԹՆ-ի զեկույցում նույնպես պետք է բացահայտվեն իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

Իրական շահառուի սահմանման փորձնական ծրագիր

Իրական շահառուների վերաբերյալ պահանջներն առաջին անգամ սահմանվել են ԱՃԹՆ 2013 ստանդարտին համապատասխանության ապահովման շրջանակներում: Պահանջ 3.11 ԱՃԹՆ-ի նախորդ տարբերակում պահանջների իրականացման որևէ ժամկետ սահմանված չէր, իսկ պահանջների կատարումը պարզապես խրախուսվում էր և պարտադիր չէր: Նախորդ տարբերակում միջազգային նորմերի ու ազգային օրենսդրության պահանջների համաձայն

«Իրական շահառու» եզրույթի սահմանումների և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ հղումներ առկա չէին: ԱՃԹՆ 2013 ստանդարտի ընդունումից հետո բոլոր անդամ երկրներին առաջարկվեց մասնակցել իրական շահառուի սահմանման փորձական ծրագրին: Փորձական ծրագրի արդյունքներն ամփոփ կերպով ներկայացված են ԱՃԹՆ-ի խորհրդի արձանագրությունում:¹

ԱՃԹՆ-ի իրական շահառուների փորձական սահմանման ծրագիրն իրականացվել է 2013թ-ի հոկտեմբերից մինչև 2015թ-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում: Փորձական ծրագրին մասնակցել է ԱՃԹՆ անդամ 11 երկիր: Փորձական գնահատման հաշվետվության մեջ ընդգծվում է երեք կարևոր դրույթ.

- Ծրագրի արդյունքում իրական շահառուիների սահմանման հարցն ընդգրկվեց ԱՃԹՆ-ի անդամ երկրների օրակարգերում՝ չհայտարարված սեփականության խնդիրը դարձնելով միջազգային ուշադրության առարկա: Որոշ երկրներ փորձական ծրագրից հետո որոշեցին շարունակել իրական շահառուների բացահայտման գործընթացը: Փորձական ծրագիրը թույլ տվեց նաև բացահայտել օրենքում առկա բացերը, որոնք ներկայումս խոչընդոտում են ԱՃԹՆ շրջանակներում իրական շահառուների բացահայտման գործընթացին:
- Իրական շահառուների բացահայտման վերաբերյալ վստահելի և համապարփակ տեղեկատվություն հավաքագրելը բավականին բարդ է: Խնդիրը գրանցված սեփականատիրոջը և իրական շահառուին տարանջատելու մեջ է: Այնուամենայնիվ բավականին բարդ է ստեղծել արդյունավետ իրավական դաշտ, երբ ընկերության սեփականության իրավունքն ամրագրված է տարբեր օրենսդրություններով:
- Փորձական ծրագիրն օգտակար եղավ իրական շահառուների բացահայտման հետագա գործընթացի, մասնավորապես՝ իրական շահառուի սահմանման, բացահայտման շեմերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց բացահայտման առումներով:

Սույն հաշվետվությանը կից Հավելված A-ում ներկայացված է գնահատման հաշվետվության Աղյուսակ 1-ը, որում ներկայացված են փորձական երկրներում «իրական շահառու» եզրույթի սահմանումները: Հաշվետվությունը ցույց է տալիս, որ «բոլոր փորձական երկրներն էլ ընդունել են «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» եզրույթի այն սահմանումը, որն առաջարկվել էր ՖԱԹՖ-ի կողմից»: Համաձայն ՖԱԹՖ-ի սահմանման՝ ՔԱՈՒԱ-ն այն անհատն է, որին վստահված է կամ վստահված է եղել հասարակական/հանրային կարևոր գործառնություն:²

Փորձական ծրագրի արդյունքում «իրական շահառու» եզրույթի ամենաամբողջական և ճշգրիտ սահմանումը թերևս Ջամբիայի սահմանումն է:

«Արդյունահանող ընկերության իրական շահառուն այն անձն/անձինք է/են,

¹ ԱՃԹՆ-ի իրական շահառուների փորձական գնահատման հաշվետվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://eiti.org/document/beneficial-ownership-pilot-evaluation-report>

² <http://www.fatf-gafi.org/documents/documents/peps-r12-r22.html>

ով/ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով ամբողջությամբ տիրապետում կամ վերահսկում է/են իրավաբանական անձին»։ Արդյունահանման ոլորտում թափանցիկության պահանջի կատարումն ապահովելու համար արդյունահանող ընկերության «իրական շահառուն» սահմանվում է որպես ցանկացած կամ որոշակի ֆիզիկական անձ, ով

ուղղակի կամ անուղղակի կերպով հսկում է արդյունահանող ընկերությունը կամ - արդյունահանող ընկերությունում ունի նշանակալից մասնակցություն և զգալի տնտեսական օգուտ է ստանում նշված ընկերությունից։

«Իրական շահառուն» ֆիզիկական անձ է, այլ ոչ թե այլ ընկերություն կամ տրեստ։ Բարդ բաժնետիրական կառուցվածք ունեցող ընկերությունների դեպքում, որոնք կառավարվում են տարբեր կորպորատիվ մեխանիզմների կամ սեփականության և/կամ հսկողության առանձին պայմանագրերի հիման վրա, իրական շահառուներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր գտնվում են շղթայի վերին օղակում։

«Հսկողությունը» սահմանվում է որպես որոշակի անձի իրավասություն, որը թույլ է տալիս վերջինիս ապահովել արդյունահանող ընկերության գործունեության իրականացումը իր ցանկություններին համապատասխան։ Նշված իրավասության հիմք կարող է հանդիսանալ հետևյալը.

- (i) արդյունահանող ընկերությունում բավարար տոկոս բաժնեմաս կամ քվերկության իրավունք, այդ թվում հավաստող իրավունքով, բացառությամբ ընկերության 20%-ից ավել բաժնեմասի առկայություն, որը վկայում է բաժնեմասնակցության միջոցով տիրապետման կամ հսկողության մասին և կիրառելի է ուղղակի և անուղղակի բաժնեմասնակցության յուրաքանչյուր մակարդակի համար
- (ii) արդյունահանող ընկերության կառավարման վերահսկողություն այլ միջոցներով, այդ թվում
 - ա) արդյունահանող ընկերության ղեկավար մարմնի անդամների կեսից ավելին նշանակելու կամ ազատելու իրավասություն
 - բ) արդյունահանող ընկերության նկատմամբ բաժնետիրական իրավունքներ, որոնց կիրառումը կարող է հանգեցնել (i) և (բ) ենթակետերով սահմանված պայմանների կատարմանը
 - գ) արդյունահանող ընկերության ղեկավար մարմնի անդամի նշանակման համար պահանջվող համաձայնությունը տալու իրավասություն

Բորսաներում ցուցակված ընկերությունների, այդ թվում դրանց 100%-ով պատկանող դուստր ընկերությունների համար իրական շահառուների բացահայտման պահանջ սահմանված չէ։ Նշված ընկերությունները պետք է պարզապես նշեն, թե ինչպես կարելի է ձեռք բերել այդ տեղեկությունները։ Համատեղ ձեռնարկությունների դեպքում համատեղ ձեռնարկության անդամը հանդիսացող յուրաքանչյուր անձ պարտավոր է բացահայտել իր իրական շահառուին, եթե նշված անձը բորսաներում ցուցակված ընկերություն կամ դրան 100%-ով պատկանող դուստր ընկերություն չէ։ Յուրաքանչյուր անձ պատասխանատու է տրամադրված տեղեկությունների ճշգրտության համար»։

Չնայած նշված սահմանումը ներառում է «իրական շահառու» եզրույթը, ուղղակի և անուղղակի հսկողության հասկացությունները և բացառում է ընկերության կամ կազմավորման կողմից որպես իրական շահառու հանդես գալը, դրա թերությունը քաղաքական ազդեցություն ունեցող անձի հիշատակման բացակայությունն է: Այս առումով «իրական շահառու» եզրույթի սահմանումը, որը 2017թ-ի հոկտեմբերին կատարված փոփոխությամբ ընդգրկվել է Ղրղստանի Հանրապետության՝ ընդերքի օգտագործման մասին օրենքում, առավել նպատակահարմար է:

«Իրական շահառու է հանդիսանում այն ֆիզիկական անձը, ով ուղղակի կամ անուղղակի կերպով ամբողջությամբ տիրապետում կամ վերահսկում է իրավաբանական անձին:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական շահառու՝ անկախ հսկողության մակարդակից և մասնակցության կամ բաժնետիրացման չափից:

Տիրապետում կամ հսկողություն նշանակում է, որ ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով

- ա) առանձին կամ ընտանիքի անդամների և/կամ փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի առնվազն 20% մասնակցության կամ քվերակության իրավունքին
- բ) վերահսկում է իրավաբանական անձին նախապատվության իրավունք տվող բաժնետոմսերի, արտոնյալ բաժնետոմսերի և/կամ երկակի կամ բազմակի քվեարկության իրավունք տվող բաժնետոմսերի միջոցով
- գ) էական տնտեսական օգուտ է ստանում իրաբանական անձից, որը կազմում է իրավաբանական անձի տարեկան շահույթի առնվազն 15 տոկոսը
- դ) իրավասու է նշանակել կամ ազատել իրավաբանական անձի տնօրենների մեծամասնությանը
- ե) իրավունք ունի ազդել կառավարման վրա կամ վերահսկել կառավարումը կամ ընկերության գործունեությունը կամ իրավասու է կանխորոշել որոշումներն այլ միջոցներով, ներառյալ և առանց սահմանափակման գործարքների, հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի միջոցով:

Սույն օրենսգրքի իմաստով «քաղաքական ազդեցություն ունեցող անձինք» են համարվում այն ֆիզիկական անձինք, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամները և փոխկապակցված անձինք:

Սույն օրենսգրքի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:

Սույն օրենսգրքի իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե

- ա) տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի,

այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ) նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների թվի մեկ երրորդը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

գ) նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Սույն օրենսգրքի իմաստով ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են կապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում.

ա) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ) օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, վարչության անդամ, գլխավոր հաշվապահ, նրա տեղակալ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար, անդամ կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ նման այլ մարմինների անդամ»:

4. Իրական շահառուների և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց միջազգային սահմանումներն ու լավագույն փորձը

Իրական շահառուների բացահայտման համառոտ պատմությունը

Իրական շահառուների բացահայտման պահանջները մշակվել են վերջին 5 տարվա ընթացքում՝ ահաբեկչական գործողությունների ակտիվացմանը զուգընթաց փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում: Տեղեկատվության արտահոսքի արդյունքում «Պանամայի փաստաթղթեր» անվամբ հայտնի բացահայտումներից և բոլորովին վերջերս «Պարադիզի փաստաթղթեր» անվամբ հայտնի բացահայտումներից հետո ներկայումս տնտեսության բոլոր ճյուղերին պարտադրում են հրապարակել իրական շահառուների ռեեստրերը՝ հարկերից օրինական և անօրինական կերպով խուսափելու դեպքերը ներկայացնելու համար:³

Ստորև ներկայացված է իրական շահառուների բացահայտման միջազգային շրջանակների մշակման հիմնական փուլերի համառոտ նկարագրությունը.

2013 թվականի մայիսին Մեծ ությակի (G8) անդամ երկրները որոշեցին պայքարել չհայտարարագրված սեփականատիրության դեմ՝ «հրապարակելով ազգային գործողությունների ծրագրեր՝ ընկերությունների իրական շահառուների միասնական ռեեստրեր ստեղծելու նպատակով»: Այս պարտավորությունը վերահաստատվեց է 2015 թվականի հունիսին կայացած G7 գագաթաժողովին:

2013 թվականի հոկտեմբերին Միացյալ Թագավորությունը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որը սկսեց կազմել իրական շահառուների հանրային ռեեստր:⁴

2014 թվականի հոկտեմբերին ՖԱԹՖ-ը հրապարակեց թափանցիկության և իրական շահառուների վերաբերյալ հանձնարարական, որում հիմնական շեշտը դրվում էր «իրավաբանական անձ» հասկացության սխալ օգտագործման վրա, ինչպես նաև ի թիվս այլ հարցերի, անդրադարձ էր կատարվում իրավաբանական կազմավորումների գործունեությունը կարգավորող օրենսդրություններին և դրամական փոխանցումներին ներկայացվող պահանջներին: Ներկայումս նշված հանձնարարականը միջազգային օրենսդրություններում իրական շահառուների բացահայտման պահանջների համար ուղենիշ է հանդիսանում:⁵

November 2014: 2014 թվականի նոյեմբերին G20-ի անդամ երկրներն ընդունեցին

³ Տե՛ս հղումը https://www.nytimes.com/interactive/2017/11/10/opinion/gabriel-zucman-paradise-papers-tax-evasion.html?_r=0

⁴ Տե՛ս հղումը՝ <https://beta.companieshouse.gov.uk/>

⁵ <http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/reports/Guidance-transparency-beneficial-ownership.pdf>

Իրական շահառուների վերաբերյալ կարևորագույն սկզբունքները, որոնց համաձայն անդամ երկրները պետք է ներկայացնեն իրական շահառուի այնպիսի սահմանում, որը կներառի ֆիզիկական անձանց, ովքեր 100%-ով տիրապետում կամ վերահսկում են իրավաբանորեն գրանցված անձին կամ կորպորատիվ մարմինին: Նշված սկզբունքների համաձայն այդ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի համապատասխան իրավասու մարմիններին (այդ թվում իրավապահ մարմիններին), իսկ անդամ երկրները պետք է ունենան տեղեկատվության փոխանակման արդյունավետ համակարգ և պայքարեն «իրավաբանական անձ» հասկացության սխալ կիրառման դեմ (այդ թվում ըստ ներկայացնողի բաժնետոմսերի թողարկումն արգելելու միջոցով):⁶

2014 թվականի դեկտեմբերին Եվրամիությունն ընդունեց Փողերի լվացման դեմ պայքարի նոր հրահանգը, ըստ որի անդամ երկրները պետք է պետական մակարդակով ստեղծեն իրական շահառուների մասին տեղեկատվության ռեեստրեր, որոնք հասանելի կլինեն բացառապես պետական մարմիններին: Հրահանգը հրապարակվեց 2015թ-ի մայիսին:⁷

2016 թվականի փետրվարին հրապարակվեց ԱՃԹՆ 2016 ստանդարտը: Նշված ստանդարտով սահմանված ընդհանուր 8 պահանջից երկրորդը վերաբերում է իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներին: 2.5 կետը վերաբերում է մասնավորապես իրական շահառուների բացահայտման պահանջին: Նշված դրույթը բաղկացած է 8 ենթաբաժիններից (ա-ից է), որոնք համառոտ ներկայացված են ստորև:

- ա) ԱՃԹՆ-ն իրականացնող պետություններին խորհուրդ է տրվում վարել հանրությանը հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած անձի/անձանց իրական սեփականատերերի ռեգիստր:
- Պահանջվում է, որ ԱՃԹՆ-ի զեկույցում արձանագրվեն իրական սեփականության բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը և բազմաշահառու խմբի քննարկումները (այդ թվում իրական շահառուների բացահայտման ճանապարհային քարտեզը):
- Իրական շահառուների մասին հանրամատչելի ռեգիստրը պետք է ներդրվի մինչև 2020թ-ի հունվարի 1-ը:
- Բացահայտվող տեղեկություններում պետք է ներառվեն իրական շահառուի անունը, քաղաքացիությունը և բնակության երկիրը, ինչպես նաև նշվեն քաղաքական ազդեցություն ունեցող անձանց անունները:
- Բազմաշահառու խումբը մասնակից ընկերությունների նկատմամբ պետք է ձևավորի այնպիսի մոտեցում, որը հնարավորություն կտա ապահովել նրանց կողմից տրամադրվող տեղեկությունների ճշգրտությունը:
- Բազմաշահառու խումբը պետք է համաձայնության գա «իրական շահառու» եզրույթի սահմանման շուրջ՝ հաշվի առնելով միջազգային նորմերն ու ազգային օրենսդրության պահանջները (բորսայում գրանցված ընկերությունները պետք է ներկայացնեն համապատասխան բորսաներում

⁶ http://www.g20australia.org/sites/default/files/g20_resources/library/g20_high-level_principles_beneficial_ownership_transparency.pdf

⁷ <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32015L0849&from=EN>

առկա փաստաթղթերի հղումները):

- ԱՃԹՆ-ի զեկույցում նույնպես պետք է բացահայտվեն իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

2017 թվականի հունիսին Հայաստանը միացավ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) բազմակողմանի կոնվենցիային, որի նապատակն էր ապահովել հարկային համաձայնագրերով սահմանված միջոցառումների իրականացումը՝ հարկային բազայի քայքայչումը և շահույթի դուրսբերումը կանխարգելելու նպատակով:⁸

Միջազգային սահմանումներ

ՖԱԹՖ-ը իրական շահառուների և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց¹⁰ վերաբերյալ համապարփակ կարգավորումներ է պարունակում և նշված երկու հասկացությունների համար էլ կարող է դիտարկվել որպես գերակայող միջազգային նորմ:

ՖԱԹՖ-ն առաջարկում է իրական շահառուի հետևյալ սահմանումը.

Իրական շահառուն այն ֆիզիկական անձն է, ով ամբողջությամբ տիրապետում և (կամ) վերահսկում է հաճախորդին** և (կամ)այն անձը, ում անունից կատարվում է գործարքը: «Տերմինը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր վերջնական արդյունավետ հսկողություն են իրականացնում իրավաբանական անձի կամ կազմավորման նկատմամբ»:*

*«ամբողջությամբ տիրապետում և (կամ) վերահսկում է» և «արդյունավետ վերջնական հսկողություն» բառակապակցությունները վերաբերում են այն դեպքերին, երբ հսկողությունը/ սեփականությունն իրականացվում է շղթայական մեխանիզմների կամ անուղղակի հսկողության միջոցներով:

** Նշված սահմանումը պետք է կիրառվի նաև իրական շահառուի կամ կյանքի ապահովագրության և ներդրումային բնույթի այլ ապահովագրական վկայագրերի շահառու(ներ)ի համար:

ՖԱԹՖ-ն առաջարկում է քաղաքական ազդեցություն ունեցող անձի հետևյալ սահմանումը.

«ՔԱՈՒԱ) այն անհատն է, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ:

- ՖԱԹՖ-ի ուղեցույցն առաջարկում է նաև տեղական և օտարերկրյա ՔԱՈՒԱ-ների տարբերակում:
- Սահմանումը ներառում է նաև այն անձանց, ում վստահվել են առանցքային գործառույթներ միջազգային կազմակերպություններում:
- ՔԱՈՒԱ-ների սահմանումը չի ներառում վերոհիշյալ խմբերի միջին կամ

⁸ <http://www.oecd.org/tax/beps/>

⁹ <http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/reports/Guidance-transparency-beneficial-ownership.pdf>

¹⁰ <http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/recommendations/Guidance-PEP-Rec12-22.pdf>

կրտսեր պաշտոններ զբաղեցնող անհատներին:

- Սահմանումը ներառում է նաև ընտանիքի անդամներին և մտերիմներին:

ՔԱՌԻԱ-ի նշված սահմանումը կարելի է համեմատել ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայով առաջարկվող ՔԱՌԻԱ-ի մեկ այլ միջազգային սահմանման հետ.

«ՔԱՌԻԱ-ները այն անհատները և վերջիններիս ընտանիքի անդամները և մտերիմներն են, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ»:¹¹

ԵՄ ՓԼ/ԱՖ հրահանգում¹² ՔԱՌԻԱ-ն սահմանվում է հետևյալ կերպ.

(ա) պետության կամ կառավարության ղեկավարներ, նախարարներ և նախարարի տեղակալներ

(բ) խորհրդարանի անդամներ կամ համարժեք օրենսդիր մարմիններ

(գ) քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմիններ

(դ) վերին ատյանի դատարանների, սահմանադրական դատարանների անդամներ և բարձրաստիճան դատական մարմիններ, որոնց որոշումները ենթակա չեն հետագա բողոքարկման (բացի բառափոխ դեպքերից)

(ե) հաշվիչ պալատի անդամներ կամ կենտրոնական բանկի խորհուրդների անդամներ (զ) դեսպաններ, գործերի հավատարմատարներ և բարձրաստիճան գինվորական սպաներ

(է) պետությանը պատկանող ձեռնարկությունների վարչական, ղեկավար և վերահսկիչ մարմինների անդամներ

(ը) միջազգային կազմակերպությունների տնօրեններ, փոխտնօրեններ, խորհրդի անդամներ կամ այլ համարժեք գործառույթներ իրականացնող անձինք:

ԱՃԹՆ-ի շրջանակներում ՖԱԹՖ-ի նորմերի սահմանափակումները

Չնայած ԱՃԹՆ 2016 ստանդարտը հղում է կատարում իրական շահառուների միջազգային նորմերին, և վերջնական իրական շահառուի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ՖԱԹՖ-ի սահմանումը շատ պարզ է, դեռևս առկա է մի քանի կոնցեպտուալ հարց՝ կապված ՖԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համատեքստում ԱՃԹՆ-ում իրական շահառուի՝ ՖԱԹՖ-ի սահմանումն օգտագործելու:

- ՖԱԹՖ-ով նախատեսված չէ իրական շահառուների բացահայտման կամ իրական շահառուների հրապարակային ռեեստրի վարման պահանջ: ՖԱԹՖ-ի առաջարկությունները հիմնականում կիրառվում են ֆինանսական ծառայությունների ոլորտում՝ բանկային գաղտնիքի մասին օրենքների համատեքստում (ինչպես օրինակ՝ Հայաստանի դեպքում): Այս առումով միջազգային օրենքները հրապարակային բացահայտում պահանջող թափանցիկության նախաձեռնությունների համար լավագույն

¹¹ https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf

¹² <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32015L0849&from=EN>

- հարթակ չեն կարող հանդիսանալ:
- ՖԱԹՖ-ի հրահանգները կիրառվում են «Ճանաչիր քո հաճախորդին» բանկային ուղեցույցների համատեքստում: Դրանք կիրառելի չեն տնտեսության բոլոր ճյուղերում կառավարման համակարգերի (օրինակ՝ նախարարությունների) նկատմամբ:
 - Տնտեսության որոշ ճյուղեր, որոնք կցանկանան ՖԱԹՖ-ով սահմանված իրական շահառուների բացահայտման չափանիշների շրջանակներից դուրս գալ, կարող են եզակի ոլորտի նախադեպ ստեղծել, որի արդյունքում տվյալ ոլորտը (ԱՃԹՆ-ի դեպքում՝ հանքաարդյունաբերության կամ նավթաարդյունահանման ոլորտները) կընկալվի որպես թիրախային կամ «առանձնացված»: Սա կարող է հանգեցնել խորհրդարանում տվյալ ճյուղի լրբիստական գործողություններին:
 - Չնայած այն հանգամանքին, որ ՖԱԹՖ-ի սահմանումն ընդգրկում է տեղական ՔԱՈՒԱ-ներին, \$Լ/ԱՖ մոտեցման համաձայն օտարերկրյա ՔԱՈՒԱ-ները դիտարկվում են բարձր ռիսկային: ՖԱԹՖ ուղեցույցի համաձայն «Օտարերկրյա ՔԱՈՒԱ-ները մշտապես կրում են բարձր ռիսկ, որոնց նկատմամբ անհրաժեշտ է ձեռնարկել հավելյալ ուսումնասիրության միջոցառումներ: Բացի այդ, եթե տեղական կամ միջազգային կազմակերպություններում ընդգրկված ՔԱՈՒԱ-ի հետ գործարար հարաբերությանը բնորոշ է բարձր ռիսկ, պետք է ձեռնարկվեն սահմանված միջոցառումները»:

Ի տարբերություն դրան, ԱՃԹՆ-ն առանձնակի տարբերություն չի դնում տեղական և օտարերկրյա ՔԱՈՒԱ-ների միջև:


ՀՀ-ի հանքաարդյունաբերական ոլորտում իրական շահառուների բացահայտման շրջանակները մշակելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել նշված խնդիրները:

Լավագույն միջազգային փորձը

ԱՃԹՆ իրական շահառուների բացահայտման փորձնական ծրագրի մեկնարկից հետո լայնորեն սկսել են կիրառվել մի շարք նորմեր: Ներկայում չկա ԱՃԹՆ ստանդարտի վրա հիմնված՝ իրական շահառուների հանրամատչելի ռեեստր, սակայն ԱՃԹՆ միջոցառումներ իրականացնող բոլոր երկրները մշակում են ծրագրեր իրական շահառուների բացահայտման գործողությունների ծրագրի միջոցով՝ 2020թ. հունվարին նախագիծն ավարտելու համար: Դիտարկվում են երկու տեսակի միջոցառումներ՝ ընդհանուր կիրառելիության միջոցառումները (օրինակ՝ բազմաոլորտային, որոնք պետք է պահպանվեն *բոլոր* ընկերությունների կողմից) և արդյունահանող ոլորտին բնորոշ միջոցառումները:

Ներկայացնենք առաջին տեսակի միջոցառումների երկու օրինակ: Նախ, Միացյալ Թագավորությունում օգտագործվում է ընկերությունների գրանցման հանրամատչելի և օգտագործման համար հարմար տվյալների բազայի փորձնական տարբերակը, որտեղ ներառված են նաև տվյալներ նշանակալից

վերահսկողություն ունեցող անձանց մասին:¹³



Պատկեր 1. Նշանակալից մասնակցություն ունեցող անձանց որոնում

Ընկերությունների գրանցման պալատի փորձնական կայքը թույլ է տալիս օգտագործողներին որոնել ՄԹ-ում գրանցված բոլոր ընկերությունների մեջ, գտնել ընկերության բնութագիրը, գրանցումների պատմությունը, ընկերության գործող վարկերը, վճարման ենթակա տուրքերը, ինչպես նաև գրանցված ղեկավարներին և «Նշանակալից վերահսկողություն ունեցող անձանց»: Նշանակալից վերահսկողություն ունեցող անձը սահմանվում է որպես որևէ ֆիզիկական անձ, ով ունի ընկերության 25%-ից ավելին կամ ում պատկանում է ընկերության քվեարկող իրավունքների ավելի քան 25%-ը, կամ այն ֆիզիկական անձը, ով ունի ընկերության տնօրենների խորհրդի անդամների մեծամասնությանը նշանակելու կամ պարտականություններից ազատելու իրավունք:¹⁴

Հարկ է նշել, սակայն, որ նշանակալից վերահսկողություն ունեցող անձանց սահմանումը ոչ մի կերպ չի անդրադառնում ՔԱՌԻԱ-ներին: Իսկապես, ՄԹ օրենքներում չկա ազգային ՔԱՌԻԱ դասի սահմանումը և նախատեսված չէ ազգային ՔԱՌԻԱ ռեեստրի վարումը: Թեև դատական համակարգի պաշտոնյաների գույքի հանրամատչելի ռեեստր չի վարվում, գործում է խորհրդարանի անդամների գույքի ռեեստր (որտեղ ընդգրկված են նաև նախարարները): 2012թ. Վարվելակերպի նորմերի մասին օրենքը նախատեսում է գույքի հայտարարագրման երկու ձև՝ Անդամների գույքի ռեեստր, որտեղ նշվում է աշխատանքն այլ կազմակերպությունում, հովանավորությունը, գույքը և բաժնեմասնակցությունը¹⁵, և Անդամների գույքի հայտարարագիր, համաձայն որի

¹³ <https://beta.companieshouse.gov.uk/>

¹⁴ https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/621568/170622_NON-STAT_Summary_Guidance_4MLD_Final.pdf

¹⁵ Ռեեստրի վերջին տարբերակը տե՛ս հետևյալ հղմամբ. <https://publications.parliament.uk/pa/cm/cmregmem/171023/171023.pdf>

համապատասխան խորհրդարանական քննարկումների շրջանակներում պետք է բացահայտվեն առկա գործածար շահերը¹⁶ : Հետևաբար, Ընկերությունների գրանցման պալատի կայքում հնարավոր չէ որոնել ազգային ՔԱՌԻԱ-ների բաժնային մասնակցությունն ընկերություններում, քանի որ Մեծ Բրիտանիայում այս դասը պարզապես գոյություն չունի:

Ի տարբերություն ՄԹ-ի, Ուկրաինայում տրված է ՔԱՌԻԱ սահմանումը և գործում է ազգային ՔԱՌԻԱ-ների հանրամատչելի առցանց տվյալների բազա ուկրաիներենով և անգլերենով:¹⁷ ՔԱՌԻԱ-ների ռեեստրում տարբերակվում են ՔԱՌԻԱ-ների հետևյալ դասերը¹⁸.

1. Ազգային քաղաքական գործիչներ
2. Օտարերկրյա քաղաքական գործիչներ
3. Գործիչներ, ովքեր իրականացնում են քաղաքական գործառույթներ միջազգային կազմակերպություններում
4. Փոխկապակցված անձինք (մտերիմներ)
5. Կապված անձինք (ընտանիքի անդամներ)

Ուկրաինան առանձնացնում է ազգային ՔԱՌԻԱ-ների 61 կարգ՝ նախագահից և վարչապետից սկսած ընդհուպ մինչև «երկրորդ կարգի» հանրային ծառայողներ: Ներկա պահին տվյալների բազայում ներմուծված է ավելի քան 25,000 առանձին բնութագիր, ՔԱՌԻԱ-ների ավելի քան 11,000 բնութագիր և մտերիմների և ընտանիքի անդամների ավելի քան 14,000 բնութագիր: Յուրաքանչյուր ՔԱՌԻԱ բնութագիրը պարունակում է աշխատանքային փորձը (համապատասխան հղումներով), ընտանիքի անդամների և մտերիմների ընդլայնվող գծապատկերը, անձնական և գործարար կապերը, եկամտի հայտարարագիրը, դրամական ակտիվների ցանկը, ստացված նվերների, ֆինանսական պարտավորությունների, հողերի, բնակելի տների, բնակարանների և այլ անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, ակտիվների և փոխկապակցված ընկերությունների ցանկը: Վերջին կարգում նշվում է նաև, թե արդյոք ՔԱՌԻԱ-ն հանդիսանում է տվյալ ընկերության իրական շահառու¹⁹:

¹⁶ http://www.right2info.org/resources/publications/asset-declarations/uk_code-of-conduct-house-of-commons

¹⁷ Անգլերեն տարբերակը հասանելի է այստեղ՝ <https://pep.org.ua/en/>

¹⁸ <https://pep.org.ua/en/hto-taki-publichni-diya/>

¹⁹ Ուկրաինայի ներկա նախագահ Պյոտր Պորոշենկոյի բնութագիրը ներկայացված է այստեղ՝ <https://pep.org.ua/en/person/2>

Secure | <https://pep.org.ua/en/person/2>

- PERSONAL DATA
- CAREER
- CONNECTIONS
- INCOME DECLARATION
- ASSETS
- ASSOCIATED LEGAL ENTITIES

Business connections

- Hladkovskiy Oleh Volodymyrovych – business relationships, ⓘ
Interdepartmental Commission on Policy of Military-Technical Cooperation and Export Control
, Head
- Rainin Ihor Lvovych – business relationships,
Administration of President of Ukraine , Head
- Moskalevskiy Viacheslav Oleksandrovych – business relationships, ⓘ
PJSC CNCIF PRIME ASSETS CAPITAL , Member of the Supervisory Board
- Vovchanovskiy Yevhen Ivanovych – business relationships, ⓘ
LLC Central European Confectionery Company , Founder/Member
- Zaitsev Serhii Ivanovych – business relationships, ⓘ
LLC Central European Confectionery Company , Founder/Member
- Mai Kostiantyn Vladyslavovych – business relationships, ⓘ
LLC Central European Confectionery Company , Founder/Member
- Yarandin Volodymyr Anatoliiovych – business relationships, ⓘ
LLC Central European Confectionery Company , Founder/Member
- Bezsmertnyi Oleksandr Mykhailovych – business relationships, ⓘ
LLC Central European Confectionery Company , Head
- Osiianenko Hennadii Leonidovych – business relationships,

Պատկեր 2. Ուկրաինայի նախագահի գործարար կապերը

Թեև երկրների մեծամասնությունը չի արգելում ՔԱՌԻԱ-ներին ունենալ բաժնեմաս արդյունահանող ոլորտի ընկերություններում (իսկ որոշ երկրներում իրական շահառուների բացահայտման սահմանված ցուցանիշը կազմում է 0%), Հոնդուրասի Ընդերքի մասին օրենքը, օրինակ, արգելում է պետական պաշտոնյաներին ձեռք բերել բաժնեմաս արդյունահանման լիցենզիաներում:

Կապված անձանց բաժնային մասնակցություն

Խնդիրներից մեկն այն է, թե արդյոք ՔԱՌԻԱ հետ կապված կամ փոխկապակցված անձինք (ընտանիքի անդամները, մտերիմները կամ գործընկերները և այլն) պետք է բացահայտեն իրենց մասնակցությունն ընկերություններում (Հայաստանի դեպքում՝ իրենց բաժնեմասը արդյունահանող ընկերություններում) ԱՃԹՆ գործընթացի շրջանակներում: Այս հարցի պատասխանը բացասական է: Լավագույն դեպքում, պետական պաշտոնյաների գույքի գրանցման գործընթացը պետք է ընդգրկի նաև կապված անձանց (այսինքն, ներկայացվի միայն կապված անձանց, այլ ոչ թե նրանց գույքի ցանկը): Դրանով տեղեկությունների բացահայտումը պետք է սահմանափակվի: Կապված անձանց իրական շահառուների բացահայտումը ԱՃԹՆ տվյալների հավաքագրման գործընթացի շրջանակներում չի պահանջվում:

Այնուամենայնիվ, կասկածելի գործարքների հետաքննության դեպքում իրական բաժնետիրական կառուցվածքը պարզաբանելու պատասխանատվություն կրող և կասկածելի գործարքը հետաքննող մարմինների (Հայաստանի դեպքում՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը և Էթիկայի հանձնաժողովը) կողմից օգտագործվող ընդհանուր տվյալների բազաները թույլ կտան ունենալ տվյալների ամբողջական պատկեր և պարզել կապված անձանց իրական բաժնեմասնակցությունը:

5. Հայաստանում իրական շահառուների և ՔԱՌԻԱ առաջարկվող սահմանումները

Հայաստանի ընդերքի օգտագործումը կարգավորող օրենսդրությունը հանքաարդյունաբերական ընկերությունների իրական շահառուների, բացահայտման վերաբերյալ հատուկ դրույթներ չի սահմանում: Նշված օրենսդրությունը չի պարունակում նաև ընկերության սեփականատերերի կտրուկ փոփոխության վերաբերյալ հաշվետվության մեխանիզմ, իսկ հանքաարդյունաբերության ոլորտի կարգավորող մարմինը՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքո գործող ընդերքի գործակալությունը, չի վարում հանքաարդյունաբերական ոլորտի ընկերությունների իրական շահառուների կոնֆիդենցիալ կամ հրապարակային ռեեստր: Սահմանված միակ պահանջը վերաբերում է հանքաարդյունաբերական ոլորտի ընկերությունում 10%-ից ավել բաժնեմաս ունեցող անձանց բացահայտմանը՝ հանքի շահագործման լիցենզիայի/իրավունքի համար դիմելիս, սակայն ամեն դեպքում դա մանրամասն տեղեկությունների հրապարակման պահանջ չէ, քանի որ նշված տեղեկությունները հանրամատչելի չեն, և հանքաարդյունաբերական ընկերության բաժնետերերի մասին տեղեկատվությունից բացի՝ այլ մանրամասն տեղեկությունների հրապարակում չի պահանջում: Բացի այդ ուղղակի բաժնետերերի մասին տեղեկատվությունը որևէ կերպ չի ստուգվում և սահմանված չէ Պետոեգիստրին թարմացված տեղեկությունների ներկայացման պահանջ:

Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունն իրական շահառուների և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մի քանի սահմանում է առաջարկում: Նշված դրույթները հիմնականում ամրագրված են ֆինանսական ոլորտը, արժեթղթերի շուկան և գնումների գործընթացները կարգավորող օրենսդրություններում:

Նշանակալից մասնակցության բացահայտման պահանջը պարտադիր է բանկերի համար և վերաբերում է 10%-ից ավել ուղղակի կամ անուղղակի բաժնեմասնակցությանը: Ավելին, ՀՀ ԿԲ-ն իրավասու է գրանցել բանկում նշանակալի մասնակցի փոփոխությունը:

Այսպիսով Հայաստանի որևէ բանկում ուղղակի կամ անուղղակի բաժնեմասնակցության ցանկացած փոփոխություն իրավական ուժ չունի՝ առանց ՀՀ ԿԲ նախնական համաձայնության:

Իրական շահառուների մանրամասն սահմանումը ներկայացված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում: Վերջինիս համար հիմք է հանդիսացել ՖԱԹՖ-ի հետևյալ սահմանումը.

Իրական շահառուն գործարար հարաբերության կամ գործարքի կողմ չհանդիսացող այն ֆիզիկական անձն է, ում անունից կամ օգտին հաճախորդը իրականում գործում է և (կամ) ով իրականում տիրապետում և (կամ) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, ում անունից գործարքը կատարվում է:

Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, ով փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի (գործարար հարաբերության) նկատմամբ և (կամ) ի շահ ում իրականացվում է գործարար հարաբերությունը կամ գործարք:

Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, ով՝

ա) քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել դրա որոշումները

բ) հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավարմամբ անդամ

գ) գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

«Բանկերի և Բանկային գործունեության մասին» օրենքը փոխկապակցված անձանց մասին սահմանում է հետևյալը.

Հոդված 8. Փոխկապակցված անձինք

4. Սույն օրենքի և բանկերի գործունեությունը կարգավորող այլ օրենքների իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում **հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:**

Իրական շահառուների մասին ամբողջական տեղեկատվությունը հիմնականում հասանելի է բանկերին (բանկում հաշիվ բացող ցանկացած անձի վերաբերյալ)՝ գործող ՓԼ/ԱՖ օրենսդրության պահանջների համաձայն և ՀՀ ԿԲ-ին (իր հսկողության և վերահսկողության տակ գտնվող ֆինանսական հաստատությունների վերաբերյալ): Այսպիսով, իրական շահառուների բացահայտման պրակտիկա կա և նմանատիպ ռեեստրեր իրոք գոյություն ունեն Հայաստանում, թեև դրանք հրապարակային չեն: Ուստի նշված փորձը կարող է դիտարկվել և կիրառվել հանքարդյունաբերության ոլորտում իրական շահառուների բացահայտման գծով իրավական փոփոխությունների մշակման համար:

Ներկայումս ընկերության գրանցման կանոնների /պրակտիկայի համաձայն՝ Հայաստանում չի պահանջվում իրական շահառուների հրապարակային բացահայտում, ավելին, այդպիսի բացահայտումը ֆորմալ բնույթ է կրում և չի կարող համարվել պատշաճ բացահայտում: 20,000,000 ՀՀ դրամը գերազանցող կանոնադրական կապիտալով առևտրային կազմակերպություններից պահանջվում է պետական գրանցման գործընթացի շրջանակներում լրացնել հայտարարագիր Պետոեգիստրում, թեև նման հայտարարագրի հավաստիության

ստուգման մեխանիզմ չկա և այն ներկայացվում է միայն ներքին կարգով ու հանրամատչելի չէ: Առաջին մակարդակի բաժնետնամանակցության մասին տեղեկատվությունը տրամադրվում է վճարային հիմունքներով:

Հանքարդյունաբերական ընկերությունները հիմնականում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կամ փակ բաժնետիրական ընկերությունների կազմափրավական ձև ունեն: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրանցամատյանը վարում է Արդարադատության նախարարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրը: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների սեփականատերերի մասին տեղեկատվությունն (միայն ուղղակի մասնակիցների մասին) առկա է, բայց չի հրապարակվում: Մատենավարը չունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերջնական շահառուի վերաբերյալ հետաքննություն իրականացնելու կամ ստուգման լիազորություններ: Այն պարզապես գրանցում է տրամադրված տեղեկությունները, ինչպես նաև գրանցում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների սեփականատերերի փոփոխությունները: Սեփականատերերի նմանատիպ փոփոխությունը համարվում է պատշաճ և վավեր ռեգիստրում գրանցումն իրականացնելու պահից:

Ռեեստրի վարման միևնույն սկզբունքը գործում է Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի ռեեստրի վարման դեպքում: Վարկային կազմակերպությունները ու ներդրումային ընկերությունները տրամադրում են բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի ռեեստրի վարման և թարմացման ծառայություններ: Այս դեպքում ևս Կենտրոնական դեպոզիտարիայում առկա տեղեկությունները հանրամատչելի չեն, դիտարկվում են որպես բանկային գաղտնիք և կարող են բացահայտվել միայն հաշվետիրոջ թույլտվությամբ և (կամ) դատարանի որոշման հիման վրա: Կենտրոնական դեպոզիտարիային գրանցման հետ կապված հետաքննություն վարելու կամ ստուգելու լիազորություններ վերապահված չեն, այնուամենայնիվ, ոչ ռեգիդենտ ընկերությունների դեպքում որոշակի ստուգում է իրականացվում ՓԼ/ԱՖ օրենքի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, սա չի կարող համարվել կազմակերպության իրական շահառուի պատշաճ ստուգում, սակայն պրակտիկան ներդրված է և հիմնված է իրական շահառուի բացահայտման ՓԼ/ԱՖ - ի պահանջների վրա:

Հարկ է նշել, որ առկա է միայն ընկերության գործադիր տնօրենի մասին տեղեկատվությունը, քանի որ դա պահանջվում է Պետոռեգիստրի կողմից գրանցումն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, տնօրենների խորհրդի անդամների գրանցման վերաբերյալ որևէ պահանջ չկա. սա կարող է ցույց տալ համապատասխան շահառուների կողմից ընկերության սեփականության որոշակի մակարդակ: Բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը պահանջում է, որ ընկերությունը վարի տնօրենների խորհրդի ռեեստր, որը պարունակում է նվազագույն տեղեկություն: Սակայն գործնականում շատ ընկերություններ նման ռեեստր չեն վարում, և նման տեղեկատվությունը հանրամատչելի չէ:

Հանրային ծառայողներին/պետական պաշտոնյաներին ներկայացվող պահանջներն ավելի հստակ են սահմանված. պահանջվում է ցանկացած առևտրային կազմակերպությունում որևէ սեփականության առկայության բացահայտում և տարեկան կտրվածքով տեղեկատվության թարմացում՝ պաշտոնավարման ընթացքում: Այս պահանջը վերաբերում է նաև պաշտոնյաների ընտանիքի անդամներին: Տեղեկատվության տրամադրման պահանջը ուժի մեջ է պաշտոնից ազատվելուց մեկ տարվա ընթացքում: Այստեղ կարող է առաջարկվել դիտարկել թարմացված տեղեկատվության տրամադրման հարցը պաշտոնից հրաժարվելուց հետո 3 տարվա ընթացքում, բայց, ըստ ներկայիս պրակտիկայի, դա կարող է լինել պակաս արդյունավետ, քանի որ պետական պաշտոնյայի եկամտի աղբյուրները և (կամ) հայտարարած գույքը ստուգելու լիազորություններ սահմանված չեն, որովհետև Էթիկայի հանձնաժողովը նման ուժ չունի և չի ուսումնասիրում այդ հարցերը:

Համապատասխան պետական գործակալություններ, օրենքներ և կարգավորումներ

Ինչպես արդեն նշվել է՝ իրական շահառուների բացահայտման գծով հիմնական և միասնական օրենսդրություն մշակված չէ: Համապատասխան դրույթներն ամրագրված են հետևյալ օրենքներում և իրավական ակտերում.

- 2001 թ-ից գործող «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում 2016թ-ին հաստատված փոփոխություններով ներկայացվել է 20,000,000 ՀՀ դրամը գերազանցող կապիտալով իրավաբանական անձանց գրանցման փուլում իրական շահառուի բացահայտման պահանջ: Նշված պահանջը հիմնված է ՓԼ/ԱՖ-ի պահանջների վրա և ըստ էության միայն պաշտոնական բնույթ է կրում, քանի որ ներկայացված տեղեկատվության հետագա ստուգում չի իրականացվում: Տեղեկատվությունը հանրամատչելի չէ և պահվում է պետական գրանցումն իրականացնող մարմնի մոտ:
- Ֆինանսական հատվածը կարգավորող օրենսդրությունը («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք) համարվում է լավագույններից մեկը Հայաստանում: Այն արդյունավետ կերպով իրականացվում է համապատասխան կարգավորող մարմնի և լիցենզավորված մարմինների (բանկեր, ներդրումային ընկերություններ, դեպոզիտարիաներ և այլն) կողմից: Հաշվետվությունների ներկայացման փորձը գործնականում կարող է օգտակար լինել հանքաարդյունաբերական ընկերությունների ռեեստր ներդնելու և համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու հարցում: Ավելին, ՀՀ ԿԲ կողմից մշակված մանրամասն ենթաօրենսդրական ակտերը կարող են կիրառվել նշված հարցի հետ կապված երկրորդային օրենսդրության մշակման համար: «Կապված անձ» հասկացությունը շատ ճիշտ

ձևակերպված է բանկային օրենսդրությունում: Նշված ձևակերպումը կարող է օգտակար լինել նաև հանքաարդյունաբերական ոլորտի ընկերություններում իրական շահառուների բացահայտման կապակցությամբ:

- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2008թ-ից և հիմնված է ՖԱԹՖ-ի սկզբունքների և պահանջների վրա, ներառում է իրական շահառու հանդիսացող ֆիզիկական անձի ամենամաքողական սահմանումը, ուղղակի և անուղղակի մասնակցության և հսկողության հասկացությունը, որոշումների կայացման կամ ընկերությանը վերաբերող հարցերի կարգավորման համար պատասխանատու բարձր օղակի ղեկավարների նշանակման միջոցով հսկողության իրականացումը, ինչպես նաև գործարքի հիման վրա շահերի բացահայտումը: Նշված սահմանումը, որը կիրառվում է ֆինանսական ոլորտում և ուղղված է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացմանը, որպես այդպիսին նախատեսված չէ հրապարակման համար: Բացի այդ այն կիրառվում է բանկերի, համապատասխան կազմակերպությունների և հաշվետու անձանց կողմից՝ բանկային գաղտնիքի և անձնական տեղեկությունների պահպանման օրենքներով սահմանված պահանջները խստագույնս պահպանելու պայմանով: Այդուհանդերձ, նշված սահմանումը և նրանում ներկայացված հայեցակարգը կարող է հիմք ծառայել հանքաարդյունաբերական ընկերությունների իրական շահառուների սահմանումը մշակելու համար:
- Ընդերքի մասին ՀՀ օրենսգիրքը, որն ուժի մեջ է 2012թ-ից, իրական շահառուների բացահայտման պահանջների վերաբերյալ էական տեղեկություններ չի պարունակում: Միակ պահանջը վերաբերում է լիցենզիայի հայտատուի ուղղակի բաժնետիրոջ բացահայտմանը: Հրապարակման պահանջ և հիմնական կամ էական իրավական հետևանքներ սահմանված չեն: Այնուամենայնիվ, նշված դրույթը կարևոր է, քանի որ այն որոշ առումով փորձ է հանդիսանում և կարող է հետագայում մանրամասնեցվել և լրամշակվել լիցենզավորման, ինչպես նաև հանքաարդյունաբերական ընկերության բաժնեմասերը նոր ներդրողի վաճառելու և այլ դեպքերում:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2017թ-ից, պետական պայմանագրերի շրջանակներում գնումների իրականացման մրցույթների հայտատուների համար մանրամասն տեղեկությունների հրապարակման պահանջ է սահմանում: Իրական շահառուների մասին տեղեկությունների բացահայտման պահանջը վերաբերում է 10%-ից ավել բաժնեմաս ունեցող անձանց, հայտատուի գործադիր ղեկավարների նշանակման իրավասություն ունեցող անձանց, ինչպես նաև հայտատուի 15%-ից ավել շահույթ/եկամուտն ստանալու իրավունք ունեցող անձանց: Հարկ է նշել, որ եթե հայտատուն հաղթում է գնումների մրցույթում, նշված անձանց մասին տեղեկատվությունը պատշաճ կերպով հրապարակվում է մրցույթի

հաղթողի մասին հայտարարության հետ մեկտեղ: Նշված մշակումը ողջունելի է, սակայն բավարար չէ պետական մրցույթների հայտատուների և դիմող ընկերությունների իրական շահառուների հետ կապված տեղեկատվությունն ամբողջովին թափանցիկ դարձնելու համար: Այդուհանդերձ, նշված օրենսդրական դրույթն արտացոլում է պետության քաղաքականությունը, որի նպատակն է ապահովել պետական գնումների համակարգի թափանցիկությունը և հաշվետվողականություն սահմանել:

- Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է 2012թ-ից հանրային ծառայողները պարտավոր են առևտրային կազմակերպություններում բաժնեմաս ունենալու դեպքում հայտնել այդ մասին հանրային ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո մեկ ամսվա ընթացքում, ինչպես նաև իր պաշտոնավարման ողջ ընթացքում հանձնել առևտրային կազմակերպությունում իր բաժնեմասնակցությունը հավատարմագրային կառավարման: Նշված օրենքի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի անդամները պարտավոր են ներկայացնել եկամուտների և գույքի մասին հայտարարագրեր տարեկան կտրվածքով, ինչպես նաև հանրային ծառայողի պաշտոնից ազատվելուց հետո 12 ամսվա ընթացքում:
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է 2013թ-ից, սահմանում է տեղեկատվության հասանելիության գաղափարը և հարցվող տեղեկատվության տրամադրման պահանջ պետական ընկերությունների, բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների, հանրային նշանակություն ունեցող կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց համար: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ տեղեկատվության տրամադրումը կարող է մերժվել, եթե այն պարունակում է բանկային կամ առևտրային գաղտնիք:
- Նոր հարկային օրենսգիրքը, որն ուժի մեջ կլինի 2018թ-ից և որը դեռևս պետք է կիրառվի և ստուգվի գործնականում, տրանսֆերային գնագոյացման մասին նոր դրույթներ է պարունակում, որոնք մինչև նոր օրենսգրքի ընդունումը Հայաստանում որևէ կերպ սահմանված չէին: Նոր օրենսգիրքը ներառում է տրանսֆերային գնագոյացման պահանջների համաձայն ընկերության փոխկապակցվածության սահմանումը, ինչպես նաև 20% բաժնեմասնակցության սահմանաչափ և այլ պահանջներ է սահմանում:
- Մեզ հայտնի է, որ Արդարադատության նախարարությունը նախատեսում է փոփոխություններ իրականացնել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում, որոնց նպատակն է ստեղծել ընկերության, դրա ղեկավարների, սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման համընդհանուր հարթակ: Այնուամենայնիվ, մենք փոփոխությունների նախագիծը չենք

ուսումնասիրել և մեր տեղեկությունների համաձայն՝ հրապարակման ենթակա նյութերի բովանդակությունը կասահմանվի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Մեր կարծիքով, ճիշտ կլինի բացահայտման պահանջը սահմանել օրենքով, ինչը թույլ կտա խուսափել կանոնակարգերում հաճախակի փոփոխությունների իրականացումից: Ավելին, անհրաժեշտ է հետամուտ լինել, որպեսզի այդ տեղեկատվությունը հրապարակայնորեն հասանելի լինի: Ավելորդ ենք համարում նշել, որ ն անհրաժեշտ է զարգացնել Պետական ռեգիստրիստուգման կարողությունները՝ տեղեկատվության տրամադրման և բացահայտման գործընթացի պատշաճ իրականացումն ապահովելու համար:

Մեր կարծիքով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և/կամ Պետոբեգիստրի կողմից հանքաարդյունաբերական ընկերությունների իրական շահառուների ռեեստրը մշակելիս՝ պետք է հաշվի առնել հետևյալ հաստատությունների փորձառությունը որոնք վարում են կազմակերպությունների և պետական պաշտոնյաների հայտարարագրերի ռեեստրեր:

1. Պետոբեգիստր՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հիմնական մասնակիցների մասին տեղեկատվության պահպանման հետ կապված
2. Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա և դեպոզիտարիայի ներքո գործող գործակալություններ (բանկեր, ներդրումային ընկերություններ և այլն), որոնք վարում են բաժնետիրական ընկերության բաժնետերերի ռեեստր
3. Էթիկայի հանձնաժողով, որը հրապարակում է տեղեկատվություն պետական պաշտոնյաների և իրենց ընտանիքների մասին

7. Առաջարկվող մոտեցում

Հաշվի առնելով իրական շահառուների բացահայտման ներկա սահմանափակումները՝ արդյունահանող ոլորտի իրական շահառուների բացահայտման համար պետք է կիրառել հատուկ ոլորտային մոտեցում, որ ԱՃԹՆ-ն Հայաստանում կարողանա ավարտել նախագիծը մինչև սահմանված վերջնաժամկետը (2020թ. դեկտեմբերի 1)՝ հիմք ընդունելով հատուկ ոլորտային սցենարը: Այս մոտեցումը համահունչ կլինի բազմաոլորտային մոտեցմանը և թույլ կտա խուսափել հնարավոր ուշացումներից՝ ապահովելով ընկերությունների գրանցման պահին իրենց իրական շահառուների պարտադիր բացահայտման պահանջը:

Նախորդ հաշվետվությունների՝ ՀՀ արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության մասին 2018թ-ի հաշվետվության և քաղաքացիական հասարակության փորձագետ Դավիթ Հակոբյանի կողմից իրական շահառուների վերաբերյալ պատրաստված հաշվետվության նախնական վերլուծության արդյունքները նման են: Երկուսի դեպքում էլ շեշտվում է համապատասխան ոլորտը կարգավորող և կիրառվող օրենսդրության բացակայության փաստը, ինչպես նաև ստուգման և/կամ հետաքննության իրավասությունների սահմանափակ լինելը և նույնիսկ բացակայությունը:

Այնուամենայնիվ, ֆինանսական հաստատությունների և վերջիններիս կարգավորող մարմնի (ՀՀ ԿԲ և ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոն) ներկայիս փորձը կարելի է կիրառել համապատասխան օրենսդրություն մշակելու և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության իրավասությունները սահմանելու համար:

Ներկա պահին ամենակարևոր խնդիրն է առաջարկել իրական շահառուի սահմանումը՝ հիմք ընդունելով սույն հաշվետվության 4-րդ բաժնում ներկայացված միջազգային փորձը, նախորդ բաժնում ներկայացված հայկական իրողությունը, ինչպես նաև այլ նախկին սովետական երկրների կողմից կիրառվող մոտեցումները, որոնք ունեն նմանատիպ փորձ, օրենսդրական զարգացումներ ու մշակույթ:

Ինչ վերաբերում է իրական շահառուի սահմանմանը, որը պետք է ընդգրկվի Ընդերքի մասին օրենսգրքում, հաշվի առնելով միջազգային փորձը, մենք առաջարկում ենք ստորև ներկայացված սահմանումը, որի համար հիմք է ծառայել 2017թ-ի հոկտեմբերին Դրղստանի Հանրապետության ընդերքի օգտագործման մասին օրենքում կատարված փոփոխության օրինակը, և որը հաստատվել է ԱՃԹՆ միջազգային քարտուղարության կողմից և հիմնված է ՀՀ օրենսդրությունում իրական շահառու հասկացության մինչ օրս առկա սահմանումների վրա:

«Իրական շահառու է հանդիսանում այն ֆիզիկական անձը, ով ուղղակի կամ անուղղակի կերպով ամբողջությամբ տիրապետում կամ վերահսկում է իրավաբանական անձին:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական շահառու՝ անկախ հսկողության մակարդակից և մասնակցության կամ բաժնետիրացման չափից:

Տիրապետում կամ հսկողություն նշանակում է, որ ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով.

- ա) առանձին կամ ընտանիքի անդամների և/կամ փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի առնվազն 20% մասնակցության կամ քվեարկության իրավունքին.
- բ) վերահսկում է իրավաբանական անձին նախապատվության իրավունք տվող բաժնետոմսերի, արտոնյալ բաժնետոմսերի և/կամ երկակի կամ բազմակի քվեարկության իրավունք տվող բաժնետոմսերի միջոցով.
- գ) էական տնտեսական օգուտ է ստանում իրաբանական անձից, որը կազմում է իրավաբանական անձի տարեկան շահույթի առնվազն 15 տոկոսը.
- դ) իրավասու է նշանակել կամ ազատել իրավաբանական անձի տնօրենների մեծամասնությանը.
- ե) իրավունք ունի ազդել կառավարման վրա կամ վերահսկել կառավարումը կամ ընկերության գործունեությունը կամ իրավասու է կանխորոշել որոշումներն այլ միջոցներով, ներառյալ և առանց սահմանափակման գործարքների, հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի միջոցով:

Սույն օրենսգրքի իմաստով «քաղաքական ազդեցություն ունեցող անձինք» են համարվում այն ֆիզիկական անձինք, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամները և փոխկապակցված անձինք:

Սույն օրենսգրքի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները:

Սույն օրենսգրքի իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե

- ա) տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.
- բ) նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների թվի մեկ երրորդը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.
- գ) նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Սույն օրենսգրքի իմաստով ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են կապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ էլնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում.

- ա) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տնօրինող մասնակից.
- բ) օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.
- գ) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, վարչության անդամ, գլխավոր հաշվապահ, նրա տեղակալ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար, անդամ կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ նման այլ մարմինների անդամ»:

Հանրային կարևոր գործառույթներ ունեն

- պետության կամ կառավարության ղեկավարները, բարձրաստիճան քաղաքական գործիչները, նախարարները և նախարարի տեղակալները, դատական կամ ռազմական պաշտոնյաները, պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների վերին օղակի ղեկավարները կամ քաղաքական կուսակցությունների ակնառու գործիչները,
- դեռևս ազդեցիկ դեր ունեցող նախկին պաշտոնյաները:
- Արյունակցական, ամուսնական կամ այլ քաղաքացիական կապ ունեցող ընտանիքի անդամները կարող են ընտանիքի անմիջական անդամ չհամարվել:
- Փոխկապակցվածություն կարող է լինել թե՛ անձնական և թե՛ գործնական»:

Ինչպես արդեն նշեցինք, պետական պաշտոնյաների կողմից որևէ առևտրային մարմնում ուղղակի կամ անուղղակի մասնակցության մասին տեղեկությունների բացահայտման պահանջն արդեն իսկ ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ և տարածվում է նաև նրանց ընտանիքի անդամների վրա:

Այսպիսով քաղաքական ազդեցություն ունեցող անձի նշված սահմանումն արդեն իսկ արդյունավետ կերպով կիրառվում է Հայաստանում Էթիկայի հանձնաժողովի գույքի ռեգիստրում:

«Ընդերքի օգտագործման մասին» ՀՀ օրենսգրքում պահանջվող փոփոխությունները մշակելու, ընդունելու և կիրարկելու ժամանակ շեշտը պետք է դրվի սահմանված պահանջներին համապատասխանություն ապահովելու մեխանիզմի մշակման վրա, որը *պահանջում* է իրական շահառուի բացահայտում:

Մեր կարծիքով օրենսդրության (այդ թվում, բայց ոչ միայն Ընդերքի օգտագործման մասին օրենսգրքի) փոփոխությունների նախագծերը մշակելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել ստորև ներկայացված սկզբունքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ հիմք ապահովել հանքարդյունահանող ընկերությունների իրական շահառուների պատշաճ հրապարակման համար:

1. Պատշաճ կերպով սահմանել հանքարդյունահանող ընկերությունների

իրական շահառուներին՝ հետևյալի հիման վրա.

- a. Ուղղակի կամ անուղղակի բաժնեմասնակցություն (մենք առաջարկում ենք սահմանել **10%** ցանկացած բաժնեմասնակցության դեպքում)
 - b. Հանքաարդյունահանող ընկերության ղեկավարի և/կամ տնօրենների խորհրդի անդամի նշանակելու իրավասություն կապիտալում մասնակցության (անկախ մասնակցության չափից) և/կամ պայմանագրային կամ գործարար հարաբերությունների և/կամ համբավի հիմքով
 - c. Հանքաարդյունահանող ընկերությունն ուղղակի կամ անուղղակի կերպով ղեկավարելու ցանկացած պայմանագրային իրավունք
 - d. Հանքաարդյունահանող ընկերության հասույթը կիսելու պայմանագրային պարտավորություն կամ այլ համանման պայմանավորվածություն, որով համապատասխան մարմինը ձեռք է բերում շահույթի 5%-ից ավելին ստանալու իրավունք:
 - e. Ցանկացած հեղինակավոր ֆոնդային բորսայում ցուցակված արժեթղթեր ունեցող ընկերությունների դեպքում հրապարակում չի պահանջվում (համաձայն Ա&ԹՆ պահանջների):
2. Իրական շահառուի պատշաճ բացահայտումը պարտադիր պահանջ պետք է լինի հանքաարդյունահանման (հետախուզության կամ շահագործման) լիցենզիա ստանալու համար: Նշված պահանջը պետք է ուժի մեջ լինի 2019թ-ի երկրորդ կեսից:
 3. Մինչև 2020թ-ի հունվարի 1-ը բոլոր մետաղական հանքաարդյունաբերական ընկերությունների (այդ տվում առկա ընկերությունների) իրական շահառուների հրապարակումը պետք է համարվի պարտադիր պահանջ:
 4. Բացահայտված իրական շահառուների անկախ քննության, ինչպես նաև համապատասխանության ապահովման որոշակի իրավասություններ պետք է վերապահվեն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը և/կամ Պետոռգիստրին (այդ թվում, բայց ոչ միայն հանքաարդյունահանող ընկերությունների ֆինանսավորման աղբյուրների ստուգումը (հատկապես ոչ ֆինանսական հաստատություններից ստացված փոխառությունները և ֆիզիկական գործունեության հասցե չունեցող օՖշորային ընկերություններից ստացված ֆինանսավորումը)):
 5. Անհրաժեշտ է սահմանել պատժամիջոցների ցանկ հրապարակման պահանջը պատշաճ կերպով չկատարելու դեպքում, այդ թվում, բայց ոչ միայն սահմանել **60-օրյա ժամկետ**, ֆինանսական պատասխանատվություն (տուգանքի չափը կարևոր է), ինչպես նաև որպես առավելագույն պատժամիջոց՝ հետ կանչել լիցենզիան: Վերջինս կարելի է կիրառել միայն դատարանի որոշման առկայության դեպքում՝ իրական շահառուների մասին տեղեկատվության ոչ պատշաճ հրապարակման կամ ապակողմնորոշիչ տեղեկությունների հրապարակման վերաբերյալ

բավարար ապացույցներ ունենալու դեպքում:

6. Անհրաժեշտ է մշակել տեղեկատվության փոխանցման համաձայնագիր՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը հանքաարդյունահանող ընկերության սեփական կապիտալում փոփոխությունների մասին (որոնք հանգեցնում են մեկ կամ մի քանի գործարքի (այդ թվում փոխկապակցված գործարքների) միջոցով որևէ անձի կողմից ուղղակի կամ անուղղակի կերպով 10%-ից ավել բաժնեմասի ձեռքբերմանը) պատշաճ կերպով տեղեկացնելու համար՝ նախքան նման գործարք իրականացնելը՝ նշված համաձայնագիրը չիրականացնելու դեպքում գործարքն անվավեր ճանաչելու պայմանով:

Տվյալների հավաքագրում և ստուգում

Առաջարկվող սխեմայով իրական շահառուների մասին տվյալների հավաքագրումը և ստուգումը կարելի է ապահովել երկու հիմնական եղանակով (Ընդերքի մասին օրենսգրքի փոփոխություններ).

- Տարբերակ 1. օպտիմալացնել տեղեկատվության հավաքագրումը առկա երկու գրանցման աղբյուրների ներսում (Կենտրոնական դեպոզիտարիա և Պետոռգիստր)՝ փորձելով կիրառել իրական շահառուների բացահայտման պահանջը հանքաարդյունահանման ոլորտում
- Տարբերակ 2. բացահայտել իրական շահառուների մասին տեղեկատվությունը ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքո գործող ընդերքի գործակալությանը՝ ստուգման և ճշգրտման նպատակով

Տարբերակ 1-ի առավելությունն այն է, որ այն հիմնվում է ընկերությունների գրանցման հետ կապված առկա կարողությունների վրա և նախապատրաստում է իրական շահառուների բացահայտման նախատեսվող բազմաոլորտային մոտեցումը: Այս տարբերակի թերությունն այն է, որ այն կախված է այլ փոփոխական բաղադրիչներից: Այս մոտեցման դեպքում անհրաժեշտ է ստեղծել երկու առանձին վարչական գործընթաց բարելավելու կարողություններ, և առաջանում է վտանգ, որ իրական շահառուների հանրային գրանցամատյանը պատրաստ չի լինելու մինչև ԱՃԹՆ սահմանված վերջնաժամկետը՝ 2020թ. հունվարի 1-ը: Տարբերակ 1-ի մեկ այլ թերությունը միասնական հանրամատչելի բազայի բացակայությունն է (տարբեր տեսակի ընկերություններ ընդգրկող), հետևաբար ԱՃԹՆ պահանջները պարտադրում են ներքին համակարգերի աստիճանական փոփոխություններ և էական փոփոխությունների կառավարման կարողություն: Ավելին, տվյալ տարբերակի ընտրությունը կնշանակի, որ Պետական ռեգիստրը կիսով չափ հանդես կգա որպես կարգավորող մարմին արդյունահանող ընկերությունների բաժնետիրական կառուցվածքի փոփոխությունների պատշաճ ուսումնասիրության և հաստատման հարցում և անգամ կվարի արդյունահանող ընկերությունների երկրորդ և ավելի բարձր աստիճանի կապվածության միջոցով վերջնական իրական շահառուների ռեեստրը, այդ թվում ուղղակի (առաջին աստիճանի) մասնակցությունից թեկուզ մեկ աստիճան բարձր բաժնեմասնակցության փոփոխությունների գրանցումը:

Տարբերակ 2-ի առավելությունն այն է, որ այն Ընդերքի գործակալության համար ստեղծում է իր հսկողության տակ գործող ընկերությունների բաժնետիրական կառուցվածքը հսկելու և հասկանալու կարողություններ: Երկրորդ առավելությունն այն է, որ այդ տեղեկությունների հրապարակումը (Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայքում իրական շահառուների գրանցամատյանը հրապարակելու միջոցով) ավելի քիչ փոփոխությունների հետ է կապված և չի պահանջում առանձին SS համակարգերի ինտեգրումը:

Գոյություն ունի նաև միջանկյալ տարբերակ, որի դեպքում պետք է անցկացվեն վերապատրաստումներ իրական շահառուների բացահայտման վերաբերյալ և ստեղծվեն համապատասխան կարողություններ թե՛ Ընդերքի գործակալությունում, թե՛ Պետտեգիստրում, ինչի արդյունքում Պետտեգիստրը պատրաստ կլինի բազմաոլորտային մոտեցմանը:

Հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների/մշակումների ներկայիս փուլը և ինստիտուցիոնալ շրջանակները Հայաստանում, ինչպես նաև ընկերությունների (իրավաբանական անձանց) միասնական ռեգիստրի մոտավոր ներդրումը, բոլոր տվյալների՝ ներառյալ և առանց սահմանափակման իրավաբանական անձանց տվյալների, լիցենզիաների, արտոնագրերի և այլ համանման փաստաթղթերի համար նախատեսված տվյալների շտեմարանների փոխանցումը Պետտեգիստրին, մենք առաջարկում ենք հանքարդյունահանող ընկերությունների իրական շահառուների բացահայտման հարցում որդեգրել բազմաոլորտային մոտեցման քաղաքականությունը՝ «Ընդերքի օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ մշակելու, ընդունելու և կիրարկելու և Պետտեգիստրին ու ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը ստուգման և օրենքի համապատասխանության պահանջի ապահովման որոշակի իրավունքներ վերապահելու միջոցով: Նշված մոտեցումը թույլ կտա մինչև 2020թ-ի հունվարի 1-ը (ԱՃԹՆ վերջնաժամկետը) ունենալ հանքարդյունահանող ընկերությունների իրական շահառուների հանրային ռեգիստր Նշված պատճառներով մենք առաջարկում ենք ընտրել առաջին տարբերակը և առաջնորդվել հետևյալ ժամանակացույցով.

1. 2018թ-ի ընթացքում մշակել Ընդերքի մասին օրենսգրքի փոփոխությունները՝ խորհրդակցելով շահառուների հետ՝ մինչև 2018թ-ի ավարտը դրանք ընդունելու նպատակով
2. Հետևել, որպեսզի օրենսդրական փոփոխությունները ներդրվեն 2019թ-ի ընթացքում՝ դրանք 2020թ-ին կիրարկելու նպատակով
3. Կամավոր կերպով բացահայտել իրական շահառուների մասին տեղեկատվությունը ԱՃԹՆ-ի երկրորդ զեկույցի համար (մինչև 2019թ-ի վերջին եռամսյակը)
4. 2019թ-ի հունիսից ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը և Արդարադատության նախարարությունը նախատեսում են սկսել երկրորդային օրենսդրության մշակման և հանքարդյունահանող ընկերությունների համար պետական ռեեստրի ստեղծման

աշխատանքները՝ համակարգը մինչև կիրառումը փորձարկելու նպատակով բավարար ժամանակ ունենալու համար:

5. 2019թ-ից կազմակերպել և իրականացնել մի շարք սեմինարներ ուսումնական ծրագրեր և հանդիպումներ (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն/ԱՃԹՆ)՝ նոր օրենսդրական պահանջներին ծանոթացնելու նպատակով:

2018 թ.-ին ընդերքի մասին օրենսգրքում փոփոխությունների իրականացման արդյունքում կպահանջվեն այլ օրենքների (տե՛ս սույն հաշվետվությանը կից Հավելված A) և նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններ, ինչպես նաև անհրաժեշտ կլինի նշված ոլորտի համար հատուկ երկրորդային օրենսդրություն մշակել:

8. Ինստիտուցիոնալ առաջարկություններ

Կարծում ենք, որ համաձայն բազմաոլորտային մոտեցման՝ տվյալները համապատասխան դեպքերում պետք է փոխանցվեն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը (համաձայն ընդերքի օգտագործման օրենսգրքի փոփոխության) և ՀՀ պետեզիստր ու Կենտրոնական դեպոզիտարիա: Էթիկայի հանձնաժողովը պետք է իրավունք ունենա տեղեկատվություն ստանալ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասին: Անհրաժեշտ կլինի նաև սահմանել համապատասխան գործակալությունների և հաստատությունների միջև տեղեկությունների փոխանակման կանոններ՝ փոխըմբռնման հուշագրեր մշակելու միջոցով:

Անհրաժեշտ կլինի նաև հետևել, որպեսզի տեղեկատվությունը պատշաճ կերպով հրապարակվի Պետեզիստրի կողմից և լինի հանրամատչելի՝ առանց որևէ սահմանափակման (այդ թվում վճարման):

Ստուգման իրավասությունը պետք է վերապահվի ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը, իսկ այլ հաստատությունները (ինչպես օրինակ Պետեզիստրը) նշված ստուգման իրականացման համար պարտավոր կլինեն համագործակցել նախարարության հետ:

Որպես այլընտրանքային տարբերակ՝ կարելի է նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանը վերապահված ստուգման իրավասությունը տալ որևէ մասնագիտացված գործակալության (օրինակ՝ ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնին), հաշվի առնելով վերջիններիս փորձը: Մեր կարծիքով նշված իրավասությունն անհրաժեշտ է մշակել և վերապահել էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ներքո գործող ընդերքի գործակալությանը՝ հաշվի առնելով հանքաարդյունաբերական ոլորտը վերահսկելու վերջինիս պարտականությունը: Սա թույլ կտա կարգավորման և կիրառման պատշաճ մշակույթ ստեղծել, ինչպես դա ներկայումս արվում է այլ կանոնակարգերի (օրինակ՝ ՀՀ ԿԲ) միջոցով:

Հավելված Ա. Իրական շահառուների սահմանումներն ըստ ԱՃԹՆ փորձնական ծրագրի

Երկիր	Իրական շահառուի սահմանում	Սահմանաչափ
Բուրկինա Ֆասո	<p>Իրական շահառու է համարվում «ցանկացած ֆիզիկական անձ, ով իրականում տիրապետում և/կամ վերահսկում է հաճախորդին, և/կամ ֆիզիկական անձ, ում օգտին իրականացվում է գործարքը կամ գործունեությունը: Դա վերաբերում է ցանկացած ֆիզիկական անձին, ով ունի ամբողջական կամ մասնակի իրավունք Բուրկինա Ֆասոյում գտնվող հանքերի նկատմամբ, արդյունահանման թույլտվություններ և մասնաբաժին, բաժնետոմսեր կամ մասնակցության այլ իրավունքներ այնպիսի ընկերություններում՝ անկախ դրանց կազմակերպչի անվանական ձևից, որոնց գույքը բաղկացած է հիմնականում Բուրկինա Ֆասոյում գտնվող հանքերում արդյունահանման լիցենզիաներից բխող իրավունքներից, անկախ նրանից, թե այդ մասնակցությունն ուղղակի է թե անուղղակի՝ Բուրկինա Ֆասոյում և այլ երկրներում գտնվող մեկ կամ մի քանի միջանկյալ ձեռնարկությունների միջոցով»:</p> <p>Իրական շահառու կարող է համարվել նաև. «ցանկացած անձ, ով ներկայացնում է տոկոսներ կամ շահաբաժիններ ստանալու կտրոն, համարվում է տվյալ կտրոնի սեփականատերը, եթե այլ բան ապացուցված չէ: Եթե կտրոնները ներկայացվում են երրորդ անձանց անունից, ներկայացնողը կարող է վճարող հաստատությանը տրամադրել ցանկ, որտեղ իր անունից և բնակության փաստացի վայրից բացի պետք է նշվեն նաև իրական շահառուների անունները, բնակության փաստացի վայրը և յուրաքանչյուրին պատկանող կտրոնի արժեքը»:</p>	Ոչ
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն	<p>Կոնգոյի օրենսդրությունում բացակայում է իրական շահառուի սահմանումը: Ուստի, Բազմաշահառու խումբը որոշել է տալ հետևյալ սահմանումը փորձնական ծրագրի շրջանակներում.</p> <p style="text-align: center;"><i>Հանքարդյունահանման ոլորտում թափանցիկություն ապահովելու նպատակով</i></p>	Այո՝ $\geq 25\%$

	<p>արդյունահանող, նավթահանող կամ գազ արդյունահանող ընկերության իրական շահառու է համարվում ստորև նշվածի փաստացի շահառուն.</p> <p>Հարստացնող կամ մշակող ընկերություն հանդիսացող լիցենզառուների և թույլտվությունների ստացողների կողմից իրացվելի ապրանքի վաճառքից, փոխանցումից կամ օտարումից ստացված կամ կուտակված եկամուտ, կապալառուների կողմից ածխաջրածիններում ունեցած բաժնեմասի կամ նավթի կամ գազի արդյունահանման պայմանագրերի շրջանակներում փայտամանակցության վաճառքից, փոխանցումից կամ օտարումից ստացված կամ կուտակված եկամուտ, և</p> <p>Հանքերը շահագործող ընկերությունների կողմից իրականացվող նավթագազային աշխատանքները կարգավորող պայմանագրերի, օրենքների կամ իրավական ակտերի կիրառման ընթացքում նավթագազային հանքավայրերում ստացված կամ կուտակված ցանկացած տեսակի եկամուտ, առանց նավթի ինքնարժեքի</p> <p>Իրական շահառու է համարվում ցանկացած ֆիզիկական անձ, ով ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ օրենքով ընդունելի արհեստական եղանակով.</p> <ul style="list-style-type: none"> • ա) իրականացնում է ընկերության փաստացի հսկողությունը, կամ • բ) ունի մասնակցություն ընկերությունում կամ ստանում է զգալի ֆինանսական օգուտներ՝ այլ բաժնետերերի կամ փայտերերի հաշվին: <p>Փաստացի հսկողություն նշանակում է.</p> <ul style="list-style-type: none"> • ա) ֆիզիկական անձ, ում ուղղակի կամ անուղղակի ձևով պատկանում է իրավաբանական անձի բաժնետոմսերի կամ քվեարկելու իրավունքների նշանակալի մասը կամ ով վերահսկում է դրանք, այդ թվում ըստ ներկայացնողի բաժնետոմսերի միջոցով: Սա չի վերաբերում կարգավորող շուկաներում ցուցակված այն ընկերությունների բաժնետոմսերի, որոնք պարտավոր են բացահայտել տեղեկություններ համապատասխան միջազգային չափանիշների համաձայն: 25%-ի և մեկ բաժնետոմսի առկայությունը վկայում է 	
--	---	--

	<p><i>բաժնեմասնակցության միջոցով տիրապետման կամ վերահսկիչ փաթեթի մասին և կիրառելի է ուղղակի կամ անուղղակի բաժնեմասնակցության ցանկացած մակարդակի համար:</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>բ) ֆիզիկական անձ կամ անձինք, ովքեր թեև չունեն իրավաբանական անձի բաժնետոմսերի կամ քվեարկող իրավունքների բավարար քանակ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն փաստացի հսկողություն են իրականացնում ընկերության նկատմամբ՝ առաջնային, արտոնյալ բաժնետոմսերի և/կամ կրկնակի կամ բազմակի քվեարկության իրավունք տվող բաժնետոմսերի միջոցով:</i> • <i>գ) եթե հնարավոր չէ սպացուցել, որ վերոնշյալ անձինք հանդիսանում են իրական շահառու, ապա իրական շահառու են համարվում այն ֆիզիկական անձինք, ովքեր հսկողություն են իրականացնում ընկերության կառավարման նկատմամբ այլ միջոցների կամ ընթացակարգերի միջոցով:</i> <p>Այս սահմանումն օգտագործվել է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության վերաբերյալ 2012թ. և ԱՃԹՆ 2012թ. զեկույցներում:</p>	
<p>Հոնդուրաս</p>	<p>Հոնդուրասի ոչ մի օրենքում «իրական շահառու» եզրը չի սահմանվում և չի հիշատակվում: Փորձնական ծրագրի շրջանակներում Բազմաշահառու խումբը որոշել է տալ հետևյալ սահմանումը.</p> <ul style="list-style-type: none"> • ա) Իրական շահառու է համարվում ֆիզիկական անձը, ով ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է Հոնդուրասի արդյունահանող ոլորտում գործող ընկերության բաժնետոմսերի 5 և ավելի տոկոսը: Այս բնութագիրը թույլ է տալիս բացահայտել նշանակալից մասնակցություն ունեցող բոլոր իրական շահառուներին: • բ) Պետական պաշտոն զբաղեցնող անձինք իրավունք չունեն օգտագործել ընդերքը կոնցեսիոն պայմանագրերի շրջանակներում (Արդյունահանման մասին գլխավոր օրենք, հոդված 75), կամ ունենալ որևէ բաժնեմաս արդյունահանող ընկերությունում կամ վերահսկել այն: 	<p>Այո՝ $\geq 5\%$</p>
<p>Ղրղզստան</p>	<p>Իրական շահառուների մասին դրույթները հիշատակվում են մի շարք իրավական տեքստերում, այդ թվում փողերի լվացման դեմ</p>	<p>Այո՝ $\geq 5\%$</p>

	<p>պայքարի մասին օրենքներում և իրավական ակտերում, ինչպես նաև Ընդերքօգտագործման մասին թիվ 77(2014) օրենքում: Հիմք ընդունելով իրական շահառուների առկա սահմանումները՝ Բազմաշահառու խումբը որոշել է տալ հետևյալ սահմանումը փորձնական ծրագրի շրջանակներում. «Իրական շահառուն ֆիզիկական անձ է, ով ունի սեփականության իրավունք, ազդում է գործարքների վրա, գործարքներից որոշակի օգուտ է ստանում և ունի առնվազն 5% բաժնեմաս: Եթե իրական շահառուն քաղաքական ազդեցություն ունեցող անձ է, ապա բաժնետիրությունը պետք է բացահայտվի՝ անկախ բաժնեմասի չափից»:</p>	
<p>Լիբերիա</p>	<p>Իրական շահառուն.</p> <ul style="list-style-type: none"> • (ա) միշտ ֆիզիկական անձ է և չի կարող լինել իրավաբանական անձ: • (բ) ֆիզիկական անձ է, ով իրականում տիրապետում կամ վերահսկում է իրավաբանական անձին՝ տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի կամ քվեարկելու իրավունքների նշանակալից մասն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ունենալու կամ հսկելու միջոցով: <p>Իրական շահառու չի կարող լինել.</p> <ul style="list-style-type: none"> • ա) անչափահաս անձ (մինչև 18 տարեկան), • բ) մյուս անձի անունից որպես անվանատեր, միջնորդ, խնամակալ կամ գործակալ հանդես եկող անձ, • գ) անձ, որը գործում է բացառապես որպես որևէ բաժնետիրական կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատակից, և ում վերահսկողությունը տվյալ ընկերության տնտեսական օգուտների նկատմամբ պայմանավորված է զուտ այդ անձի աշխատանքային կարգավիճակով: <p>Պետք է ներկայացվեն տեղեկություններ նավթային, արդյունահանող (օգտակար հանածոների մշակման պայմանագրերի կողմ) և գյուղատնտեսական ընկերությունների կողմից թողարկված բաժնետոմսերի առնվազն 5 %-ին (ընդհանուր կամ այլ) տիրապետող բոլոր սեփականատերերի (բաժնետերերի) վերաբերյալ: Անտառային ոլորտում զբաղված և արդյունահանման իրավունք ունեցող, սակայն օգտակար հանածոների մշակման պայմանագրերի կողմ չհանդիսացող ընկերությունների համար այդ ցուցանիշը</p>	<p>Այն՝ $\geq 5\%$ և $\geq 10\%$</p>

	<p>կազմում է 10%: Այդ դեպքում, երբ ոչ մի ֆիզիկական անձ չունի արդյունահանող, նավթահանող, անտառային կամ գյուղատնտեսական ընկերությունում համապատասխանաբար 5 կամ 10 տոկոս մասնակցություն, իրական շահառուների մասին տեղեկությունները պետք է ներկայացնեն ամենամեծ բաժնեմասնակցություն ունեցող հինգ բաժնետեր:</p>	
Նիգեր	<p>Բազմաշահառու խումբը սկսել է ուսումնասիրել համապատասխան իրավական տեքստերը իրական շահառուների սահմանումների և ազգային օրենքների միջև համապատասխանություն ապահովելու նպատակով: Այնուամենայնիվ, այդ աշխատանքները կարծես թե դեռ չեն ավարտվել, ինչպես նաև Բազմաշահառու խումբը չի համաձայնեցրել իրական շահառուի սահմանումը ծրագրի շրջանակներում:</p>	Ոչ
Նիգերիա	<p>Նիգերիայի ԱՃԹՆ 2012թ. նավթագազային ոլորտի աուդիտի հաշվետվության համաձայն «Նիգերիայի նավթագազային ոլորտում գործող ընկերությունների իրական շահառուները ԱՃԹՆ 3-րդ պահանջի իմաստով այն ֆիզիկական անձինք են, ովքեր ուղղակիորեն կամ անուղղակիորեն (այլ ընկերության միջոցով) փաստացի վերջնական վերահսկողություն են իրականացնում իրավաբանական անձի նկատմամբ, բացառությամբ բորսայում գրանցված ընկերությունների և 100% դուստր ընկերությունների» (կետ 37): Արդյունահանման զեկույցում ոչ մի սահմանում չի տրվում: Այնուամենայնիվ, ըստ Նիգերիայի ԱՃԹՆ գնահատման զեկույցի Բազմաշահառու խումբը համաձայնվել է, որ «քանի որ իրական շահառուի բացահայտումը նորամուծություն է, ԱՃԹՆ ստանդարտում ներկայացված սահմանումն առավել համապատասխանում է ներկայիս նպատակներին՝ ծրագիրը միջազգային չափանիշների համապատասխան, սակայն նիգերիացիների համար ընդունելի ձևով իրականացնելու համար: Այնուամենայնիվ, Նիգերիայի Ազգային շահառուների աշխատանքային խումբը համաձայնվել է նաև անդրադառնալ իրական շահառուի սահմանմանը ծրագրի իրականացմանը զուգահեռ, անհրաժեշտության դեպքում... սահմանումը պետք է լինի ընդհանուր Նիգերիայում արդյունահանող ոլորտի, մասնավորապես նավթագազային և պինդ օգտակար հանածոների</p>	Զրո

	<p>նյութի իրական շահառուների բացահայտման համար» (կետ 4):</p>	
Տաջիկստան	<p>Իրական շահառու եզրույթը հիշատակվում է մի շարք իրավական ակտերում, այդ թվում «Բանկային գործունեության մասին» օրենքում (2009) և փողերի լվացման դեմ պայքարի մասին օրենքներում: Հիմք ընդունելով իրական շահառուների առկա սահմանումները՝ Բազմաշահառու խումբը որոշել է տալ հետևյալ սահմանումը փորձնական ծրագրի շրջանակներում. «Իրական շահառուն մեկ կամ մի քանի ֆիզիկական անձ է, ում վերջնականապես պատկանում են սեփականության իրավունքները և ով փաստացի վերահսկում է հաճախորդին, և/կամ այն անձը, ում օգտին իրականացվում է գործարքը՝ 5 և ավելի տոկոս բաժնեմասով: Եթե իրական շահառուն քաղաքական ազդեցություն ունեցող անձ է, ապա նրա բաժնեմասը պետք է բացահայտվի ամեն դեպքում՝ անկախ այդ բաժնեմասի չափից»:</p>	<p>Այո՝ $\geq 5\%$</p>
Տանզանիա	<p>Բազմաշահառու խումբը դեռ համաձայնեցրել իրական շահառուի սահմանումը: Բազմաշահառու խումբը նախատեսում է վարձել խորհրդատու՝ իրական շահառուների մասին առկա իրավական ակտերն ուսումնասիրելու համար, ընդ որում առաջադրանքը նախատեսում է նաև իրական շահառուի սահմանման առաջարկելը: Քննարկվել է բաժնեմասնակցության հնարավոր սահմանաչափի հարցը, և շահագրգիռ կողմերից շատերը համաձայնել են, որ նպատակահարմար ցուցանիշը 5% է:</p>	<p>Ենթակա է հաստատման</p>
Տոգո	<p>Փորձնական ծրագրի շրջանակներում Բազմաշահառու խումբը չի եկել համաձայնության իրական շահառուի սահմանման վերաբերյալ:</p>	<p>Ոչ</p>
Զամբիա	<p>Բազմաշահառու խմբի կողմից առաջարկվող՝ իրական շահառուի սահմանումը հիմք է ընդունում «Հանքերի և օգտակար հանածոների մշակման մասին» օրենքը (2008) և Զամբիայի «Եկամտահարկի մասին» օրենքը (1996): Հետևելով իրական շահառուների վերաբերյալ զեկույց պատրաստելու նպատակով վարձած ընկերության առաջարկին՝ Բազմաշահառու խումբը որոշել է տալ հետևյալ սահմանումը փորձնական ծրագրի շրջանակներում: <i>«Արդյունահանող ընկերության իրական շահառուն այն անձն/անձինք է/են, ով/ովքեր ուղղակի կամ անուղղակի կերպով ամբողջությամբ տիրապետում կամ վերահսկում</i></p>	<p>Այո $>20\%$</p>

	<p>է/են իրավաբանական անձին»։ Արդյունահանման ոլորտում թափանցիկության պահանջի կատարումն ապահովելու համար արդյունահանող ընկերության «իրական շահառուն» սահմանվում է որպես ցանկացած կամ որոշակի ֆիզիկական անձ, ով ուղղակի կամ անուղղակի կերպով հսկում է արդյունահանող ընկերությունը կամ - արդյունահանող ընկերությունում ունի նշանակալից մասնակցություն և զգալի տնտեսական օգուտ է ստանում նշված ընկերությունից:</p> <p>«Իրական շահառուն» ֆիզիկական անձ է, այլ ոչ թե այլ ընկերություն կամ տրեստ: Բարդ բաժնետիրական կառուցվածք ունեցող ընկերությունների դեպքում, որոնք կառավարվում են տարբեր կորպորատիվ մեխանիզմների կամ սեփականության և/կամ հսկողության առանձին պայմանագրերի հիման վրա, իրական շահառուներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր գտնվում են շղթայի վերին օղակում:</p> <p>«Հսկողությունը» սահմանվում է որպես որոշակի անձի իրավասություն, որը թույլ է տալիս վերջինիս ապահովել արդյունահանող ընկերության գործունեության իրականացումը իր ցանկություններին համապատասխան: Նշված իրավասության հիմք կարող է հանդիսանալ հետևյալը.</p> <ul style="list-style-type: none"> • (i) արդյունահանող ընկերությունում բավարար տոկոս բաժնեմաս կամ քվերկության իրավունք, այդ թվում հավաստող իրավունքով՝ բացառությամբ ընկերության 20%-ից ավել բաժնեմասի առկայություն, որը վկայում է բաժնեմասնակցության միջոցով տիրապետման կամ հսկողության մասին և կիրառելի է ուղղակի և անուղղակի բաժնեմասնակցության յուրաքանչյուր մակարդակի համար • (ii) արդյունահանող ընկերության կառավարման վերահսկողություն այլ միջոցներով, այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> ա) արդյունահանող ընկերության ղեկավար մարմնի անդամների կեսից ավելին նշանակելու կամ ազատելու իրավասություն բ) արդյունահանող ընկերության նկատմամբ բաժնետիրական իրավունքներ, որոնց կիրառումը կարող է հանգեցնել (i) և (բ) ենթակետերով սահմանված պայմանների կատարմանը 	
--	--	--

	<p>գ) արդյունահանող ընկերության ղեկավար մարմնի անդամի նշանակման համար պահանջվող համաձայնությունը տալու իրավասություն</p> <p>Բորսաներում ցուցակված ընկերությունների, այդ թվում դրանց 100%-ով պատկանող դուստր ընկերությունների համար իրական շահառուների բացահայտման պահանջ սահմանված չէ: Նշված ընկերությունները պետք է պարզապես նշեն, թե ինչպես կարելի է ձեռք բերել այդ տեղեկությունները:</p> <p>Համատեղ ձեռնարկությունների դեպքում համատեղ ձեռնարկության անդամը հանդիսացող յուրաքանչյուր անձ պարտավոր է բացահայտել իր իրական շահառուին, եթե նշված անձը բորսաներում ցուցակված ընկերություն կամ դրան 100%-ով պատկանող դուստր ընկերություն չէ: Յուրաքանչյուր անձ պատասխանատու է տրամադրված տեղեկությունների ճշգրտության համար»:</p>	
--	---	--